



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Ոչ միայն անհրաժեշտություն, այլ նաև պարտականություն

Ոչ մի իշխանություն իրավունք չունի «խաղաղության» պատրվակով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպես նաև միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի բանակցային նշանոցն իջեցնելու:

ԱՅ ԱԺ հայտարարություն
14 ապրիլի, 2022թ.

Նախորդ օրերի ընթացքում Նիկոլ Փաշինյանի «հատուկ» հանձնարարականներ կատարող դեսպանի՝ Ստեփանակերտի շուկայում անփառունակ արկածներ ունեցած Էդմոն Մարությանի շուրթերով ոչ պաշտոնական թարգմանությամբ ներկայացվեց Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի հետ բանակցությունների օրակարգի 5 կետերին ի պատասխան տրված 6 կետանոց անբովանդակությունը: Վերոնշյալ բացահայտմամբ պարզվեց, որ ըստ էության հայկական կողմից որևէ պահանջ չի ներկայացվում Ադրբեջանին, բացի երրորդ կետից, որտեղ անդրադառնալով Արցախի հիմնահարցին, նշվում է.

«Հայկական կողմի համար հիմնարար են Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգության երաշխավորման, նրանց իրավունքների և ազատությունների հարգման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման հարցերը»:

Պարզվում է, որ Արցախի բոլոր քաղաքական ուժերի, իշխանական ու հասարակական շրջանակների և Հայաստանի ընդդիմադիր դաշտի մտահոգությունները տեղին են եղել դեռ սրանից մեկ ամիս առաջ, որտեղ զգուշացրել են պահանջել են, որ Հայաստանի իշխանությունները հարգեն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Բավականին երկար ժամանակ ՀՀ ԱԺ «Հայաստան» և «Պատիվ ունեն» դաշինքների պատգամավորները հարցադրման միջոցով հորդորում էին ՀՀ իշխանություններին արտաբերել «Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում» նախադասությունը, սակայն ամեն անգամ խուսափողական պատասխաններ էին տրվում: Իսկ ահա «Նախկիններից էլ նախկին» պատգամավոր Վիգեն Խաչատրյանը, որը համարվում է ԶՊ գաղափարական «ծանրակշիռ տեսաբան», համարձակվում է ասել՝ «ճիշտ չի եղել այն գաղափարը, որ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ապագա չունի»:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ազգային համախմբման և ազգի գոյաբանական փիլիսոփայության մեջ ստեղծել են արժեքներ, որոնք պետք է առաջնորդող փարոսը դառնան ոչ միայն մեր օրերի, այլ նաև ապագա սերունդների համար: Այդ առումով Հայաստանում վարվող քաղաքականությունը, ինչպես նշվում է Արցախի բոլոր քաղաքական ուժերի տեսակետն արտահայտող հայտարարությամբ, աղետաբեր է: Իսկ աղետի դեմ պայքարը ոչ միայն անհրաժեշտություն է, այլ նաև պարտականություն: «Դիմադրություն» շարժումն այսօր ստանձնել է այդ ազգային պարտքի կատարումը, և յուրաքանչյուր մասնակից իր լույսն է ներդրում իր հայրենիքի բարօրության ու ապագա սերունդների հայրենի երկրում բարգավաճ և անվտանգ ապագա ապահովելու համար:

Միայն՝ առ ի հիշեցում: Հաճախ հակադաշնակցական քարոզչության լծվածները արծարծում են 1992թ. Լեռն Տեր-Պետրոսյանի հրաժարականի պահանջով ՀՀ-ի կողմից կազմակերպված ցույցերը՝ որպես ծանր օրերին ներքաղաքական անդորրի խաթարման փորձեր: Արժեք արձանագրել, որ հենց այդ ցույցերի շնորհիվ ՀՀ Գերագույն խորհուրդը 1992թ. հուլիսի 8-ին ընդունեց որոշում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է համարվում միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում, իսկ նույն թվականի հոկտեմբերին պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Մանուկյանը: Այժմ արդեն անհերքելի է, որ վերը նշված իրողություններն անկյունաքարային նշանակություն ունեցան Արցախյան առաջին պատերազմի հաղթանակի գործում:



Մենք պետք է տոնենք և վերագտնենք այն ուժի աղբյուրը, որ ազատեց Շուշին

Մայիսի 9-ի առթիվ միջոցառումներն Արցախում մեկնարկել են ժամը 11:00-ին՝ հայտարարված լռության ռոպեով՝ ի հիշատակ Մեծ հայրենականում, Արցախյան առաջին, Ապրիլյան և 44-օրյա պատերազմներում հանուն հայրենիքի զոհվածների:

Լռության ռոպեից անմիջապես հետո (ժամը 11:01-ին) Ստեփանակերտի Աստվածամոր Սուրբ Հովհաննիսյան մայր տաճարում Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի հանդիսապետությամբ կատարվել է հոգեհանգստի կարգ՝ ի հիշատակ Մեծ հայրենական, Արցախյան առաջին, Ապրիլյան և 44-օրյա պատերազմներում նահատակված հերոսների:

Այնուհետև Ստեփանակերտի Աստվածամոր Սուրբ Հովհաննիսյան մայր տաճարից հայրց բանակի պահապան Աշոտ Երկաթի պատմական Սուրբ Խաչի առաջնորդությամբ մեկնարկել է խաչերթ դեպի Ստեփանակերտի հուշահամալիր:

Խաչերթին մասնակցել են Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը, ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, գինվորականներ, հոգեուրականներ, երիտասարդներ:

Թեմակալ առաջնորդի խոսքը Մայիսի 9-ի առթիվ. Սիրելի՛ հայրենակիցներ

Այսօր բոլորս միասին հասել ենք մի կարևոր հանգրվանի՝ Մայիսի 9-ի տոնական օրվան, որը կարծես թե խառնում է մեր մտածումներն ու զգացումները: Տարիներ շարունակ այս օրը ուժականության աղբյուր է եղել հայ ժողովրդի, հատկապես՝ արցախցիների համար, որովհետև առիթ էր տալիս մեզ ուրախանալու 3 կարևոր հաղթանակներով՝ Հայրենական պատերազմում տարած միութենական հաղթանակ, Պաշտպանության բանակի ծնունդ և Շուշիի ազատագրում:

77 տարի առաջ այս օրն ավարտվեց մարդկության պատմության մեջ ամենասարսափելի պատերազմը՝ խլելով միլիոնավոր կյանքեր: Այն զոհողություններից, որ շատ ժողովուրդներ ու երկրներ բերեցին հաղթանակի զոհասեղանին, ամսաս չմնաց նաև հայ ժողովուրդը, ի մասնավոր՝ Արցախը, որի բնակչության մեկ երրորդը մասնակցեց և ավելի քան 40.000 զոհ տվեց Հայրենական պատերազմում: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը փրկության հաղթանակ էր համաշխարհային մակարդակով, և մեզ համար այն տոնելը բնական է ու պահանջված:

Այս օրը ծնվեց նաև Արցախյան շարժման անդրափակ գավակը՝ Արցախի Պաշտպանության բանակը, որը հերոսական ուղի անցնելով՝ հայ ժողովրդին նվիրեց հայրենի երկրի ազատագրման դարձրեց չիրականացված երազի իրականացումն ու բերկրանքը: Հայրենիքի կերտման գործում հաղթանակը նվաճելը դեռ գործի կեսն է, մյուս կեսը այդ հաղթանակը պահելն ու դրան արժանի լինելն է:

Վերջին ծանր փորձությունից հետո Պաշտպանության բանակը վիրավոր է, բայց ոչ՝ մեռած: Եթե անկեղծ լինենք և հաշվի առնենք, թե ինչպիսի ուժերի և սպառազինության դեմ պայքարեց մեր բանակը, ապա կսկսենք հասկանալ, որ այն իր բնույթով պարտվող չէ և ոչ էլ թույլ, այլ նման է մի հսկա մարտիկի, որի ճանապարհին անսպասելի դրվել է «Քար գլորման», որին նա կարծես թե չէր սպասում: Ուստի, մեր բանակի 44-օրյա պատերազմի հերոսական պայքարը և նրա այսօրվա գոյությունը լիովին թույլ են տալիս մեզ տոնելու նաև նրա ծնունդը:

Բարդ ու հակասական են մեր մտքերը, երբ հիշում ենք Շուշիի հերոսական ազատագրումը, որն այնքան վարպետորեն և իրաշալի կերպով էր իրականացվել, որ ստացել էր «Հարսանիք լեռներում» անվանումը: Եվ իսկապես, կարծես Հայոց բանակը ամուսնացել էր չարի ձեռքից ազատագրված հարսի՝ Շուշիի հետ, և նրանց պսակն օրհնվել էր ազատագրող քաջերի վրա արված խաչի նշանով: Բայց մի՞թե Աստուծո՞վ միացած զույգին բռնի բաժանելով՝ կարելի է մարել նրանց սերը: Իհարկե՞ ո՛չ: Այդ սերը հավիտենական է, և ինչպես Սուրբ գիրքն է ատում՝ «Աստուծո՞ միացրածը մարդիկ թող չբաժանեն»: Հավիտենական է մեր սերը կորուսյալ հայրենիքի հանդեպ, և վաղ թե ուշ տանելու է միավորման: Ահա այս տեսանկյունից, Մայիսի 9-ը պիտի տոնենք՝ որպես Շուշիի ազատագրման օր, որովհետև ներկա պարտություններն ու անհաջողությունները երբեք չեն կարող սովորել և ջնջել անցյալի մեր նվիրումն ու սխրանքները: Ավելին, մենք պետք է տոնենք և փորձենք վերագտնել այն ուժի աղբյուրը, որ ազատեց Շուշին:

Սիրելի հայրենակիցներ, մայիսյան այս հաղթանակի տոնին մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված մեր բոլոր նահատակների հոգիների հանգստության համար, մեր բոլոր գերյալ և անհայտ կորած զավակների համար, և հայցում, որ Զրիստոս Աստված զորավիգ լինի մեր ազգին՝ քայլելու արդարության ու հաղթության ճանապարհներով:

Կարելոր է արցախյան ֆակտորի վերականգնումը

ՀՀ Բյուրոյի անդամ, ԱՀ Ազգային ժողովի ՀՀԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանի հարցազրույցը NEWS.am-ին:

- ՀՀ ԱԽԶ Արմեն Գրիգորյանն ասել է, որ մենք 6 կետանոց առաջարկ ենք ներկայացրել Ադրբեջանին, հստակ չի ասել, թե ինչի մասին է 6-րդ կետը: Հիշում ենք, որ Ադրբեջանը 5 կետանոց առաջարկ է ներկայացրել: Դուք այդ կետերի հետ կապված ի՞նչ մտահոգություններ ունեք:

- Մի քիչ այլ ձևով պիտի հարցին մոտենալ: ՀՀ իշխանություններն իմիտացիա են ստեղծում, իբր Արցախի իշխանությունների հետ իրենք քննարկել են և Արցախի իշխանությունների հետ ամեն ինչ հեզասահ է: Ապրիլի 14-ին Արցախի խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերն առաջնային մանդատ ունեցող օրենսդիր մարմնի մակարդակով վերահաստատեցին այն սկզբունքներն ու կետերը, որոնք ընդունե-

ծեռքերը լվանալ և անվտանգության երաշխավորի իրենց դերակատարությունից նահանջ արձանագրել: Բայց մենք վստահ ենք, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես իրավաբանական սուբյեկտ, հենց այդ երաշխավոր հանդիսացող կարելոր կողմն է: Եվ վերջապես, ռուս խաղաղապահները եւս մեր անվտանգության երաշխիք են այս պարագայում: Հետպատերազմյան շրջանում որեւէ վիճարկման ենթակա չէ իրենց ներկայության անհրաժեշտությունն Արցախում և իրենց կողմից գոնե հարաբերական անդորրի ապահովումը:

- Անվտանգության երաշխավորման թեզի շրջանակներում նաեւ խոսվում է, որ իշխանությունները մտադիր են կամ գուցե իրենց պարտադրվի, որ ռուս խաղաղապահներն իրենց մանդատի ավարտից հետո դուրս գան Արցախից: Դրանից հետո ի՞նչ կլինի Արցախի հետ, և արդյո՞ք հնարավոր է Արցախում խաղաղություն ապահովել առանց ռուս խաղաղապահների:

- Նախ՝ կա եռակողմ ստորագրված փաստաթուղթ, որի մեջ Արցախը չկա: Այդ հարցի պատասխանը ես դժվար թե կարողանամ որեւէ կերպ տալ, որովհետեւ ռուս խաղաղապահների ներկայությունը պայմանավորված է մյուս երկու իրավաբանական սուբյեկտների՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հետ:

Արցախի Հանրապետությունը, որպես առանձին իրավաբանական սուբյեկտ, այս հանգրվանում չկա, և հարցին պատասխանելը դժվար է, դեպքերի զարգացումները ցույց կտան: Չպետք է մոռանալ՝ 1990-ական թվականներին, երբ հորհրդային պետության փլուզումով և խորհրդային բանակի դուրսբերումից հետո Արցախում մենք կարողացանք ոչ միայն մեր անվտանգությունն ապահովել, այլ հուսալի երաշխիքներ ստեղծել: Չի բացառվում, որ քաղաքական զարգացումները հանգեցնեն նաեւ պատմության կրկնությանը:

- Զաղաքական զարգացումները, Արցախյան հավամարտության հետ կապված հարցերն այս պահին Բյուրոյի, Ռուսաստանի տնօրինության տիրույթում են հայտնվում, մի անգամ մեկն է մոդերատորի դերը ստանձնում, մեկ էլ՝ մյուսը: Հիմա ո՞ր պարագայում Արցախը կարող է երաշխավորություն ունենալ, ո՞ր գերտերությունը կարող է երաշխավորել Արցախի անվտանգությունը:

- Ես պատահական չմատնանշեցի մեր սեփական ուժերի առկայությունը և մեր սեփական ուժերին ապավինելու հանգամանքը՝ որպես հիմնական անվտանգության երաշխիք, մնացած բոլորը ածանցյալ են: Այստեղ պետք է այլ հանգամանք էլ ի նկատի ունենալ: Շատ կարելոր է արցախյան ֆակտորի վերականգնումը՝ որպես սուբյեկտայնության դրսեւորում: Ցավոք սրտի, վերջին տարիներին տեսնում ենք, որ Արցախը որպես առանձին ֆակտոր՝ գրեթե այլեւս չկա: Ինդիքը միայն բանակցային գործընթացը չէ, ինդիքը միայն տարածաշրջանային զարգացումների կոնտեքստում չէ, այլ արցախյան ֆակտորը միջազգային խաղաղոդիների շրջանակներում: Եվ պատահական չէ, որ փլուզվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, և այս կոնտեքստում Արցախը որպես հիմնական դերակատար՝ մենք չենք տեսնում:

Պատահական չէ, որ Արցախյան հարցով բանակցում են Բյուրոյում կամ Մոսկվայում, իսկ Արցախյան կողմը չկա: Եթե մենք կարողանանք վերականգնել այդ ֆակտորը և մեր սուբյեկտայնության ուղղությամբ քայլեր կատարենք, ապա մենք ականատես կլինենք այլ իրավիճակների: Ընդհանուր քաղաքական գործընթացներն Արցախում, հատկապես վերջին շրջանում՝ հենց դրան են միտված:

Կարծում եմ՝ ԱՀ ԱԺ պարիլի 14-ի հայտնի նիստը և դրան հաջորդած արձագանքներն արձանագրում են, որ բոլոր շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ Բյուրոյում կամ Մոսկվայում, շատ հստակ ընկալել են Արցախի պատգամը:

- Հիմա ընդդիմադիրներն ասում են՝ եթե բանակցող փոխվի, հնարավոր է Արցախի հետ կապված շատ հարցեր այլ կերպ դասավորվեն: Դուք ի՞նչ եք կարծում այս առումով:

- 2020թ. հոկտեմբերի վերջին լրագրողներից մեկի

Իշխանության գլուխ Փաշինյանի մնալը լրացուցիչ սպառնալիք է Հայաստանի և Ղարաբաղի համար. Արթուր Մոսիյան

ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԱՀ Ազգային ժողովի ՀՀԴ խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը Երեւանի Ֆրանսիայի հրապարակում գրուցել է NEWS.am-ի թղթակցի հետ:

Ըստ պատգամավորի՝ ընդդիմությանը սատարելուն պետք է մասնակցեն բոլորը՝ լինեն Հայաստանից, Ղարաբաղից, թե Սփյուռքից: «Մենք չենք պատրաստվում կորցնել մեր հայրենիքը: Եվ այս դեպքում ես նկատի ունեմ ինչպես Հայաստանը, այնպես էլ Ղարաբաղը», - ասաց քաղաքական գործիչը:

Միաժամանակ պատգամավորը հայտնեց, որ իրեն հայտնի չէ Ղարաբաղի հարցով ընթացիկ բանակցությունների օրակարգը: Նա նաեւ կոչ արեց Հայաստանի ներկայիս վարչապետին՝ ավելի պարզ և հստակ



լի են մեզ համար: Ինչ կետեր ուզում է սահմանի Ադրբեջանի Հանրապետությունը, Հայաստանի իշխանությունները ընդունեն, թե չընդունեն, մեզ համար դրանք երկրորդական են: Նրանք պետք է ունենան Ստեփանակերտ հասնելու և մեզ հետ համապատասխան քննարկումներ անելու քաղաքական կամք:

- Ըստ էության, Նիկոլ Փաշինյանի այն հավաստիացումները, որ Արցախում ամեն ինչ գիտեն բանակցությունների հետ կապված, սո՞ւտ են:

- Մանիպուլյացիա, պարզ մանիպուլյացիա է. ես խոսում եմ փաստերով: Նրանց հրապարակած կարդերով, որտեղ Արցախի իշխանություններին նախագահի մակարդակով, նաեւ կառավարության անդամներին հրավիրում են այստեղ, փորձում են ինչ-որ իմիտացիայի ձևով ներկայացնել, որ ամեն ինչ հեզասահ է: Սակայն դա այդպես չէ: Զաղաքական ուժերի կեցվածքն Արցախում ունի հասարակական դաշտի ակնհայտ աջակցությունը: Մենք առիթ ենք ունեցել նաեւ շրջայցեր կազմակերպելու և շոշափելու մեր ժողովրդի տրամադրությունը: Այո, շատ ծանր է մեր ժողովրդի հոգեբանական վիճակը: Այո, այս կորուստներից եւ պատերազմի այսպիսի ավարտից հետո դժվար է արցախցու մեջ պատկերացնել այնպիսի կամքի ցուցաբերում, որի ականատեսն ենք Արցախում: Բայց մենք վստահ ենք մեր ուժերին:

- Այս պահին Արցախի անվտանգության երաշխավորը կարծես թե մնացել է ռուս խաղաղապահը, և Հայաստանից այս առումով կարծես թե լուրջ քայլեր չեն ձեռնարկվում: Արդյո՞ք այդպես է տպավորությունը նաեւ Արցախում:

- Ես կմատնանշեի անվտանգության երեք բաղադրիչ: Որպես մեր երաշխիք՝ նախ Արցախի Պաշտպանության բանակը, ասել է թե՛ մեր սեփական ուժերն իր ամբողջական համակարգով, այդ թվում՝ պահեստազորը և աշխարհագրորդ: Երկրորդը՝ Հայաստանի Հանրապետությունն է: Հայաստանը ինչքան էլ փորձի իր անվտանգության երաշխավորի պարտականություններից խուսափել, այստեղ պետք է տարբերակել իշխանության ու պետության հանգամանքները: Այո, Հայաստանի իշխանությունները փորձում են իրենց



խոսելու: «Նա նորից ստում է: Մինչ այդ նա նույնպես շատ բաներ էր ասում, բայց հետո տեսանք կապիտուլյացիայի մասին 2020 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված պայմանագիրը: Նա ամեն ինչ գաղտնի էր պահում ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունից, այնպես էլ հայ հանրությունից ու Հայաստանի կառավարությունից:

Այս մարդը, արդեն չորս տարի է, ինչ իշխանության է, և ամեն Աստծո օր, գիշեր թե ցերեկ, փոխում է իր կարծիքը: Ամեն անգամ նոր բան է ասում: Նա վստահություն չի վայելում ոչ միայն Հայաստանի, այլև Ղարաբաղի մեր հայրենակիցների շրջանում», - ասաց Մոսիյանը: Ընդդիմադիրը համոզված է, որ իշխանության գլուխ Նիկոլ Փաշինյանի մնալը լրացուցիչ սպառնալիք է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ղարաբաղի համար:

«Ցուցարարներն օր օրի ավելանում են: Նրանց շարքերն ընդլայնվում են: Այնպես որ, այլ ճանապարհ պարզապես չկա: Մենք չենք կարող մեզ թույլ տալ զրկվել հայրենիքից:

Հայաստանի և Ղարաբաղի ոչ բոլոր բնակիչներն են Նիկոլ Փաշինյանի նման: Մենք այդ տեսակից չենք: Այս մարդիկ դեռ ասելիք ունեն», - ամփոփեց Դաշնակցության ներկայացուցիչը:

հարցին, թե ինչպիսի պատկերացումներ ունեք պատերազմի ավարտի հետ կապված, ես ասացի, որ իշխանափոխությունը շանս է, հնարավորություն է: Մենք ունեինք այդ հնարավորությունը թե այն ժամանակ, թե այսօր: Այստեղ պետք է պատասխանատուները, ի դեմս Հայաստանի իշխանությունների, ունենան զոհվելու, զոհաբերվելու կամք: Զաղաքական զոհը միայն ուրիշները չպիտի տան, կամ պատերազմի դաշտում զոհաբերվելու հատկանիշ միայն զինվորը չպիտի ունենա:

Ցուրաքանչյուր անձ, անհատ իր պարտականությունների եւ իր մտայնության մեջ պետք է ունենա այդ գիտակցումը՝ հանուն հայրենիքի, հանուն գերագույն արժեքների զոհաբերվելու: Եվ եթե Հայաստանի իշխանություններն այդ կամքը դրսեւորեն, մենք կունենանք լայն հնարավորություններ:

Դիմադրության շարժումը վճռական փուլում է

Արդեն շուրջ երկու շաբաթ է, ինչ Յայաստանում քաղաքական կրքերը շարունակում են լարված մնալ: Խորհրդարանական ընդդիմության կողմից սկսված Դիմադրության շարժումը օրեցօր ավելի մեծ արձագանք է գտնում Յայաստանում, Արցախում և Սփյուռքում:

Հիշեցնենք, որ մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում մեկնարկեց ապագային իշխանությունների հեռացման, Յայաստանի և Արցախի հանրապետությունները հայկական պահելու պահանջով Դիմադրության շարժման համագային հանրահավաքը, որին միացել են Յայաստանի խորհրդանշական 4 կողմերից՝ Իջեանից, Տիգրանաշենից, Սարգարապատից ու Ապարանից շարժվող քայլերի անդամներ, ՀՀ բոլոր մարզերից բազմաթիվ քաղաքացիներ, խորհրդարանական ու արտախորհրդարանական քաղաքական ուժեր, տարբեր նախաձեռնություններ, կազմակերպություններ:

Բոլորին միավորող գաղափարն է

Պայքարն այս անգամ ապակենտրոն բնույթ ունի, որը կազմակերպական առումով ճիշտ է: Բոլորովին պատահիր չէ, որ բոլորը կենտրոնացած լինեն նույն տեղում և պայքարը տանեն մեկ հրապարակում՝ Ֆրանսիայի հրապարակում: Մայիսի 2-ին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ, ԱԺ «Յայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը:

«Ինչպես 1988-ին, այնպես էլ հիմա՝ գաղափարն է բոլորին միավորել, նորից ազգի պահպանման խնդիրն է առաջացել: Եթե Նիկոլ Փաշինյանը չի հայտարարում, որ Արցախը Ադրբեյջանի կազմում չի կարող լինել, անկախախնդրի վիճակում չի կարող լինել և ՀՀ-ն պետք է վերագտնի երաշխավոր լինելու կարգավիճակը, ապա իր ասածներն ընդամենը բառակույտ են, որով փորձ է անում նորից մոլորեցնել բոլորին», - ասաց Ռուստամյանը:

Նա նշեց, որ ազգային և ապագային կերպարների պայքար է ընթանում:

«Նիկոլ Փաշինյանը կամավոր հրաժարական չի տա, նրան պետք է ստիպել հրաժարական տալ: Իր հենարանը մնացել են այն նեղ շրջանակները, որոնք կապված են միմյանց հետ ապագային ծրագրերով, և ուժայինները, որոնք ի վերջո հասկանալու են՝ ում մասին է այս խոսքը, ում են պաշտպանում և ում վրա են հարձակվում: Հարձակվում են այն մարդկանց վրա, որոնց հաշվին այսօր գոյություն ունեն: Իր հենարանը կամաց-կամաց կարճանագրի այն, ինչ իրականում կա, ու այդ պարագայում Փաշինյանի հեռանալը կլինի ժամերի հարց», - ասաց Արմեն Ռուստամյանը:

Դիմադրություն՝ ամեն օր

Մայիսի 2-ին և 3-ին Դիմադրության շարժման մասնակիցները Իշխան Սաղաթեյանի կոչով անհնազանդության ակցիաներ իրականացրին Երեւանի տարբեր հատվածներում, որի ընթացքում ոստիկանությունն անհամաչափ ուժ կիրառելով բերման էր ենթարկում հարյուրավոր քաղաքացիներին:

«Ինձ թվում է՝ մենակ մեր երթից մի հարյուրից ավելի մարդ տարան, բայց որ մեկին տանեն՝ անկասելի է: Չորքին ուղարկել է ժողովրդի դեմ՝ ի՞նչ հիմնավորումով», - ասաց Իշխան Սաղաթեյանը՝ անդրադառնալով ոստիկանության գործողություններին, իսկ երեկոյան Ֆրանսիայի հրապարակում, հանրահավաքի ժամանակ հայտարարեց:

«Նիկոլին հեռացնելուց հետո ձեռավորվելու է ազգային համաձայնության կառավարություն: Այդ կառավարությունը լինելու է ժամանակավոր: Դա չի լինելու որեւէ կուսակցության, որեւէ անհատի կառավարություն, դա չի լինելու դաշնակցական, հանրապետական, քոչարյանական կամ որեւէ մեկի կառավարություն: Դա լինելու է հայ ժողովրդի կարող ուժերից բաղկացած ազգային կառավարություն, որի մեջ ընդգրկվելու են ժողովրդի լավագույն զավակները, ովքեր կստանան պատասխանատվություն և երկրում կփոխեն իրավիճակը: Այդ կառավարությունում չեն լինելու նախկիններ, ներկաներ, սեւեր, սպիտակներ: Լինելու են կարող մարդիկ, ովքեր երկիրն այս վիճակից դուրս կբերեն: Հետեւաբար, թող է՛լ մանիպուլյացիաներ չանեն»:

Փաշինյանի հրաժարականը՝ հանրային պահանջ

Մայիսի 4-ին ՀՀ Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ՀՀ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ, «Յայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը հայտարարեց, որ իրենք հրապարակում հավաքված ժողովրդի



կողմից գործուղվել են՝ ներկայացնելու Նիկոլ Փաշինյանի հրաժարականի հանրային պահանջը, և այդ նպատակով է, որ այստեղ են:

Այնուհետև Ռուստամյանը ընթերցեց այդ պահանջը:

«Յայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը, տապալելով Արցախյան հակամարտության բանակցային գործընթացում հայկական շահերը պաշտպանելու գործը, բերել է պատերազմ ու պարտություն:

Խոստովանել է, որ կարող էր կանխել պատերազմն ու խուսափել հազարավոր զոհերից, բայց չի արել:

2021 թ. հունիսին խոստացել է 1-2 ամիս անց վերադարձնել գերիներին, բայց մինչ օրս գերիներ ունենք:

Իր նախընտրական ծրագրով խոստացել է, որ վարելու է Արցախի վերջնական կարգավիճակի հստակեցման քաղաքականություն ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացման միջոցով: Պնդել է, որ Արցախի ժողովուրդը չի կարող գոյատևել Ադրբեյջանի ենթակայության ներքո, առաջնահերթ է համարում Արցախի տարածքների դեֆոկուպացիան, սակայն փաստացի իրականացնում է «Դարաբաղն Ադրբեյջան է և վերջ» քարոզը և պաշտպանում Արցախի կարգավիճակի նշանողի իջեցման, այն է՝ Արցախն Ադրբեյջանի մաս ճանաչելու թուրք-ադրբեյջանական տեսակետը:

Խոստացել է տնտեսական թռիչքածել աճ, բայց աճում են պետական պարտքը,

աղքատությունը, գները և մահերը:

Չի կատարել բազմաթիվ խոստումներ, որոնցից վերջինը ողբերգական ավարտ ունեցավ:

Պաղատաապետության դեմ խոսացող, կարմիր լույսի տակ իր ավտոշարայան կանգնեցնելու և հետիոտներին գիշերը որպես ձեռքբերում ներկայացնող Փաշինյանի ավտոշարայունը սպանեց կնոջը և իր՝ դեռ չճանաչված երեխային:

Նիկոլ Փաշինյանը լեզուի մեջ, չունի մեր պետությունը նոր գիշումների տանելու մանդատ ու պետք է հրաժարական տա»:

«Այս հարցերից ցանկացածի առկայությունը փաստելու պարագայում իրեն հարգող ցանկացած երկրի վարչապետ հրաժարական կտար: Հիմա պատասխան կա՞ այս պահանջին, թե՞ ոչ», - ասաց Ռուստամյանը:

Ամբողջ շաբաթվա ընթացքում Երեւանում շարունակվում էին անհնազանդության ակցիաները, իրազեկման քայլերը և հանրահավաքները:

Համագային մեծ հանրահավաք՝ Եռատոնին

Մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրման, ԱՀ ՊԲ կազմավորման և Հայրենական

մեծ պատերազմի հաղթանակի օրը Երեւանում տեղի ունեցավ համագային մեծ հանրահավաք, որին մասնակցություն են ունեցել բազմաթիվ քաղաքացիներ: Հանրահավաքի մեկնարկին Իշխան Սաղաթեյանն ասաց:

«Ես այստեղից դիմում եմ Հայաստանի, Արցախի, Սփյուռքի քաղաքական ուժերին, հասարակական ուժերին, սոցիալական բոլոր շերտերին, մասնագիտական շրջանակներին, կարող անհատներին, հոգեւոր-մշակութային, կրթական, բիզնեսի, Այթի, ռազմական գործիչներին, բոլորին՝ Յայաստանն ամենքինս է: Կանգնեք կողք կողքի: Մենք կարող ենք լուծել ցանկացած խնդիր:

Այստեղ կուսակցական պայքար չկա, արտոնյալ խմբեր ու անհատներ չկան: Այստեղ համաժողովրդական ընդվզում է՝ հանուն յուրաքանչյուրիս արժանապատվության, հանուն ազգային ինքնության, հանուն արդար, ուժեղ, համերաշխ պետության, հանուն Արցախի, Հայաստանի:

Կստահե՛ք, մասնակցե՛ք, մենք հաղթելու ենք»:

Հանրահավաքին ելույթ ունեցավ նաև դաշնակցական, Արցախի խորհրդարանի 3 զումարման պատգամավոր ու Ասկերանի նախկին քաղաքապետ Ալյոնա Գաբրիելյանը:

«Սիրելի՛ հայրենակիցներ, Արցախը կա և պայքարում է, կանգուն է, չի կոտրվել ու չի կոտրվելու: Արցախահայության անունից երաշխավորված եմ հայտարարելու այստեղ, որ Արցախը Դիմադրության շարժման կողքին է: Արցախահայությունն իր ապագան կապում է միմիայն իշխանափոխության հետ», - ասաց նա:

Անդրադառնալով այն խոսակցություններին, թե Արցախում ինչու հանրահավաքներ չեն կազմակերպում, Ա. Գաբրիելյանն ընդգծեց այն փաստը, որ Արցա-

խի ժողովուրդը վստահում է իր ընտրած օրենսդիր մարմին՝ ԱԺ-ին, որն ապրիլի 14-ին իր հայտնի հայտարարությամբ հայտարարել է, որ Արցախը երբեք Ադրբեյջանի կազմում չի լինելու:

«Կա մի ճշմարտություն, դա Արցախի փրկությունն է, հայության փրկությունն է և այս դավաճաններին իշխանությունից հեռացնելը», - նշեց Ա. Գաբրիելյանը:

ՀՀ Արցախի երիտասարդական միության անդամները դիմադրության շարժման շարքերում

Ալյոնա Գաբրիելյանի գլխավորությամբ համագային զարթոնքի երթին իրենց մասնակցությունն են ունեցել նաև ՀՀ Արցախի երիտասարդական միության մի խումբ անդամներ, ովքեր մի քանի օր է՝ ինչ մասնակցում էին Դիմադրության շարժմանը: Նրանցից Տիգրանի Գասպարյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց:

«Պետք է խոստովանեմ, որ Դիմադրության շարժմանը մասնակցելուց հետո զգացողություններս շատ իրարամերձ էին: Անձամբ մասնակցելով Դիմադրության շարժմանը, տեսնելով հավաքական և պայքարող ազգիս՝ հասկացա, որ շարժումը բացառիկ է իր տեսակով և հույս է պարունակում իր մեջ: Գիտակից ու մտահոգված անձինք են այսօր պայքարում, անձվեր ու ազգասեր անձինք, ովքեր խստիվ դեմ են ազգակործան իշխանությանը և պայքարում են ազատ, հայկական, ուժեղ և միասնական հայրենիք վերընծալու համար»:

ՀՀ Արցախի երիտասարդական միության մեկ այլ անդամ՝ Մարիաննա Հովսեփյանն էլ ավելացրեց. «Կստահաբար կարող եմ ասել, որ մեր հայրենակիցները՝ բոլորն էլ թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես դիմադրության շարժման մասնակիցներ են: Տեսնում էինք, թե ինչպես են մարդիկ իրենց պատշաճաբանությամբ կամ մեքենաներից ողջունում շարժման մասնակիցներին, սակայն ինչ-ինչ պատճառներով հավանաբար չեն կարողանում միանալ:

Մենք ականատես եղանք հայ կնոջ պայքարող, անկոտրում ոգուն: ՀՀ Արցախի երիտասարդական միության ընկերակիցներով ես մասնակցություն ունեցանք կանանց երթին՝ ուշադրություն չդարձնելով տեղացող անձրեւին կամ ամենուր մեզ հետապնդող ոստիկանական խմբերին:

Ես վերադարձանք մեծ ոգեւորությամբ և հուսադրված՝ վստահ լինելով, որ մենք մենակ չենք, քանի որ Արցախում մենք ես անելիք ունենք: Պետք է արարենք, գործենք, շենացնենք մեր երկիրը՝ թշնամիներին և թուրքահպատակ իշխանություններին ցույց տալով, որ ինչքան էլ մեզ զարկեն, միեւնույն է՝ մենք ամուր ենք մեր լեռների պես»:

Կարելու է իշխան Սաղաթեյանի մամուլ առուկիսից

Մայիսի 15-ին մամուլի ասուլիսով հանդես է եկել Իշխան Սաղաթեյանը, որի ժամանակ ասել է. «Մենք խոստացել ենք ինքներս մեզ, որ գնալու ենք մինչև վերջ և այս պայքարն ավարտելու ենք հաղթանակով:

Այս օրերին մենք ցույց տվեցինք, որ հայ ժողովուրդը ոտքի է կանգնել, կրկին համախմբվել է, տեր է իր երկրին, տեր է իր հայրենիքին:

Դիմադրության շարժումը կատարել է Արցախի հարցում հայկական կողմի՝ նշանողի իջեցման գործընթացը»:

Կահազկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Արցախի հերոս» Դավիթ Ղազարյան

Մերն առ հայրենիք կիսատ չի լինում. կամ սիրում եմ, կամ ոչ: Հայրենիքի հարատևման համար մեր հայր-դիները մշտապես ստիպված են եղել պատերազմել թշնամու դեմ: Այդ իսկ պատճառով, ոչ ոք չգիտի խաղաղության գինն այնքան լավ, որքան որ մենք: Մենք գիտենք, որ պատերազմները միշտ մեզանից խլել են մեր լավագույն տղաներին: Այդ լավագույններից Դավիթ Ղազարյանի անունն անմահացել է Արցախի նորագույն պատմության հերոսական էջերում:

Ռազմական գործիչ, փոխգնդապետ, Արցախի հերոս Դավիթ Վանիկի Ղազարյանը ծնվել է 1989 թվականի մայիսի 5-ին Արարատի մարզի Վեդի քաղաքում: Հայրը՝ Վանիկ Ղազարյանը, նախկին զինվորական է /ինչն էլ հետագայում դարձել է Դավիթի մասնագիտության ընտրության հիմնաքարերից մեկը/, մայրը՝ Անիկ Ղազարյանը, տնային տնտեսուհի: Դավիթը տան միջնակ երեխան է, ունի երկու քույր՝ Գոհար և Թամար: Դավիթը ծնվել է մեծացել է ավանդական հայկական ընտանիքում, դաստիարակվել որպես ազգի նվիրյալ զավակ, որպես հզոր հայրենասեր:

Նախնական կրթությունն ստացել է Վեդիի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 2006 թվականին դպրոցն ավարտելով գերազանց գնահատականներով՝ ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Ռազմարվեստին տիրապետել է գերազանց. դա են վկայում ուսման տարիներին Դավիթի ծնողներին ուղղված բազմաթիվ շնորհակալագրերն ու նամակները:

2010 թվականին ավարտելով Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը, Դավիթը լեյտենանտի զինվորական կոչումով նշանակվել է ԼՂՀ ՊԲ 38401 գործառնի 4-րդ ՌՊՄ-ի 12-րդ ՌՎ-ում դասակի հրամանատար:

2012թ. շնորհվել է հերթական զինվորական կոչումը՝ ավագ լեյտենանտ:

2013թ. գերազանց ծառայության համար պաշտոնի բարձրացումով նշանակվել է 38401գ/մ-ի 4-րդ ՌՊՄ-ի 11-րդ ՌՎ հրամանատարի պաշտոնին:

Իր հրամանատարության ժամանակահատվածում 11-րդ ՌՎ-ն ճանաչվել է լավագույն վաշտ: 2014 թ. շնորհվել է կապիտանի զինվորական կոչում և նշանակվել 4-րդ ՌՊՄ-ի շտաբի պետ:

2016թ. դեկտեմբերին նշանակվել է 4-րդ ՌՊՄ-ի հրամանատարի պաշտոնին կապիտանի զինվորական կոչումով:

Դավիթ Ղազարյանի կինը՝ Յոհաննա Մայիլյանը, «Ապառաժ»-ի հետ զրույցում պատմեց, որ Դավիթի հետ ընտանիք են կազմել 2014 թվականին եւ տեղափոխվել Հաղարծն:

«2017թ. ծնվեց մեր առաջին զավակը՝ Անին, իսկ 2018թ.՝ Վանը: Ամուսնանալուց հետո տեղափոխվել եմ ապրել ենք Հաղարծնում, որին սիրահարվել էր Դավիթը»,- պատմում է Յոհաննան Մայիլյանը:

Դավիթը 2016 -ին մասնակցել է Նաեւ Ապրիլյան քառօրյա պատերազմին՝ Արցախի հարավ-արեւելյան ուղղությամբ, որից անմիջապես հետո վերադաս հրամանատարության կողմից պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով:

«Ստանալով այդ պարգևը, Դավիթը ոչ մի անգամ չի բարձրաձայնել այդ մասին, այլ շարունակել է իր պարտքը կատարել հայրենիքի հանդեպ: Երբեք իր մասին չէր խոսում: Իր մասին որեւէ բան ընտանիքի անդամներն իմացել են ուրիշներից»,- ասում է Յ. Մայիլյանը:

Բարի, ազնիվ, հայրենասեր. ահա այս բաներով է նկարագրում Յոհաննան իր ամուսնուն:

«Հրաշալի ամուսին ու հայր էր, ամեն ինչով՝ իդեալական, շատ լավ որդի ու թոռ էր: Այդպիսի մարդ չկա, որ դիմեր Դավիթին ու Դավիթը նրան մերժեր կամ չօգներ: Ծատ ընկերասեր էր, եւ միշտ օգնում էր իր ընկերներին»,-նշում է Յ. Մայիլյանը:

Կնոջ խոսքով՝ թեւէ Դավիթը շատ խստապահանջ էր ու կարգապահ, սակայն զինվորները նրան սիրում ու հարգում էին, իսկ ինքն էլ իր զինվորներին էր սիրում:

«Նա միշտ զինվորի կողքին էր եւ որպէս հրամանատար, եւ որպէս հայր, եւ որպէս ավագ ընկեր ու եղբայր»,- ասում է Դավիթի կինը:

2017թ. օգոստոս ամսին ստացել է հերթական զինվորական կոչումը՝ մայոր, իսկ դեկտեմբերին ստանձնել 38401 գ/մ-ի ուսումնական 5-րդ ՌՊՄ-ի հրամանատարի պաշտոնը:

«2020թ. ամռանը Դավիթը գնաց Հայաստան՝ ակադեմիայի ընդունելության քննություններին մասնակցելու

նպատակով: Պետական բոլոր քննությունները գերազանցությամբ հանձնեց, սակայն ֆիզկուլտուրայի քննությունից հետո ինչ-որ պատճառներ նշելով՝ ստիպեցին 2-րդ անգամ եւս հանձնել այդ քննությունը, սակայն այս անգամ եւս չընդունեցին արդյունքները եւ ուղարկեցին Հաղարծն: Այստեղ եւս հասկացա, որ պարզապէս չէին ուզում, որպէսզի նա շարունակեր իր ուսումը»,- նշում է Յոհաննան Մայիլյանը:

2020թ. սեպտեմբերի 14-ին շնորհվել է փոխգնդապետի զինվորական կոչում, որից շատ չանցած՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձագերծվել է 44-օրյա պատերազմը:

«Մեզ համար պատերազմն սկսվեց ռումբերի պայթյունի ձայներով եւ ռադիոընդունիչի ազդանշանով, որ դրված էր իր անկողնու մոտ: Դավիթն այդ օրերին ռազմական դրության մեջ էր, սակայն դա նորություն չէր, նմանատիպ դեպքեր էլի էին եղել: Մի քանի օր տուն չէր եկել: Ծաբաթ օրը գիշերվա ժամը 2-ին եկավ ու ռադիոընդունիչը ձեռքին պառկեց քնելու, իսկ առավոտյան ժամը 7-ին արթնացանք հենց առաջին պայթյունից ու ռադիոընդունիչից լսվող տագնապալի ձայներից»,- պատմում է Յ. Մայիլյանը:



Յոհաննան խոսքով՝ Դավիթն արդեն վաղուց կանխագուշակում էր մոտալուտ պատերազմի վտանգը, քանի որ օգոստոսին վերադառնալով Երեւանից, անմիջապես սկսեց իր պարապմունքները նորակոչիկների հետ:

«Ամբողջ օրը պալիզոններում էր, նույնիսկ ընդմիջման ժամերին տուն չէր գալիս: Առավոտյան 7-ին գնում, երեկոյան 11-ին հետ էր գալիս: Հաճախ նաեւ գիշերային ժամերին էր կրակել սովորեցնում: Երբ հարցնում էի, թե ինչո՞ւ է ուշ գալիս՝ պատճառաբանելով, որ երեխաներն էլ են իրեն կարոտում արդեն, նա պատասխանում էր՝ «երեխաներիս կրակել եմ սովորեցնում»,- հիշում է Յ. Մայիլյանը:

Դավիթի քրտնաջան աշխատանքի արդյունքը երեւաց պատերազմի օրերին՝ մարտի դաշտում: Սկսված պատերազմում փոխգնդապետ Դավիթ Ղազարյանի հրամանատարությամբ ուսումնական գումարտակը մասնակցել է թե՛ մարտերին ֆիզուլի-Կարախանբեյլի շրջանում: Զորս օր ու գիշեր փոխգնդապետ Դավիթ Ղազարյանը կատարի մարտեր է վարել, որի ընթացքում դեռ նոր գորակոչված, երկու ամսվա ծառայող զինվորները կարողացել են Դավիթի հրահանգներով խոցել 37 միավոր զինտեխնիկա եւ առգրավել 3 տանկ:

Դավիթի ընտանիքը պատերազմի առաջին օրերին տեղափոխվեց Երեւան, իսկ Դավիթը մնաց ու անձնվիրաբար կատարեց այն երդումը, որը տվել էր շուրջ 10 տարի առաջ:

Դավիթը տեղեկանալով, որ ընտանիքն արդեն Հայաստանում է, էլ չի զանգահարել հարազատներին:

«Իր հեռախոսահամարը միշտ անհասանելի էր: Մենք իր ընկերների միջոցով շատ դժվարությամբ կարողացանք ամսի 29-ին իր հետ խոսել, իսկ ամսի 30-ին հենց Դավիթն է գնալով ու հետաքրքրվել ընտանիքի որպիսությամբ: Խոսել է նաեւ երեխաների հետ: Անին հարցրել էր՝ երբ է տուն գալու, իսկ նա պատասխանել է, որ հենց գործը վերջացնի՝ տուն կգա»,- նշում է Յ. Մայիլյանը:

2020թ. սեպտեմբերի 30-ին, հարազատերի հետ խոսելուց մի քանի ժամ հետո փոխգնդապետ Դավիթ Ղազարյանը վիրավորվում է:

Կատարի մարտերի ընթացքում տանկի հարվածից վիրավորված Դավիթը շարունակում է վարել մարտը ավելի քան երեք ժամ:

«S-90 տանկը ֆիքսել էր այն դիտակետը, որտեղ Դավիթն էր եւ հարված հասցրել այդ կետին: Վիրավորվելով՝ Դավիթը շարունակել է իր հրահանգավորումը: Ինքն այնքան լավ է տիրապետում իր գործին, որ ոչ ոք չէր հասկացել, որ Դավիթը վիրավորում է ստացել, մինչեւ այն պահը, երբ նա կապի միջոցով հարցրել էր, թե արդյո՞ք չեն ուզում իրեն այդտեղից հանեն: Այդտեղ հասկացել են, որ նա վիրավոր է, եւ ըստ իր ընկերների պատմածների՝ բուժակները շտապել են օգնության, սակայն շտապ օգնության մեքենա չեն կարողացել գտնել, որպէսզի նրան տեղափոխեն, եւ արևաքամ լինելով՝ գոհվել է: Ասում են, որ այդ դեպքից հետո լսել են, թե ինչպէս են ռադիոընդունիչով ասում, որ նոր հրեշտակ ունեն, մեծ հրեշտակ»,- հուզմունքը զսպել չկարողանալով՝ պատմում է Դավիթի կինը:

Ցավոք, հզոր հրամանատարի կյանքը չհաջողվեց փրկել եւ նա գնաց անմահության ճանապարհով... 2020թ. հոկտեմբերի 4-ին Արցախի Նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով փոխգնդապետ Դավիթ Վանիկի Ղազարյանին հետմահու շնորհվում է «Արցախի հերոս» բարձրագույն կոչում: Դավիթ Վանիկի Ղազարյանը մարտը վարել է «Ոչ մի քայլ հետ...» սկզբունքով:

«Վարել է մարտը՝ ոչ մի քայլ հետ սկզբունքով, իրականում հերոսություն է կատարել: Ցավակցում եմ բոլորին, բայց հպարտ եմ նաեւ, որ ունենք Դավիթ Վանիկի Ղազարյանի նման շատ հայրենակիցներ»,- ասել էր Արցախի Նախագահը:

«Ինձ պետք չէր այդ կոչումը, ինձ պետք էր, որ նա հետ գար, սակայն հպարտ եմ, հպարտ եմ, որ իր զինվորին մենակ չի թողել ու հետ չի նայել, որ ոմանց նման չի ասել, թե հոգեպես պատրաստ չէր այդ կոչին: Նա հոգով էր զինվորական, հայրենասեր, անձնվոր, չվախեցող ու խիզախ հայի տեսակ: Նրա կարգախոսն արդեն ամեն ինչ ասում է»,- նշում է Դավիթի կինը:

Ըստ իր ընկերների պատմածների՝ Դավիթն ասել էր, որ եթե անգամ իր հարազատ եղբայրն իրեն մեքենա դառնար դեպի հետ, ապա մեքենա խփելու էր եւ կարգադրեր՝ ոչ մեկին հետ չնայել: Դավիթի երեխաները թեկուզ փոքր են տարիքով, սակայն հոր հետ կապված ամեն ինչ հիշում են: Հիշում են, թե ուր են գնացել իրար հետ, հիշում են Հաղարծնի իրենց տունը:

«Այսօր էլ արդեն Դավիթի տղան՝ Վանն է զինվորական շորերով, գլխարկով, գնեք ձեռքին ամբողջ օրը Արցախի մասին խոսում: Ոչ թե մենք ենք պատմում, այլ նա է հիշում»,- պատմում է Յոհաննան Մայիլյանը:

Նրա կարծիքով՝ այս պարտությունը մեր զինվորների պարտությունը չէր, բայց կարծում է, որ եթե նախապես որոշված էր, որ հողերը պետք է հանձնվեին, ապա այսքան անմեղ երեխաներ չպետք է գոհվեին, իսկ եթե կարող էին այդ չարաբաստիկ փաստաթուղթն ավելի վաղ ստորագրել, ապա այսօր շատերն իրենց ծնողների ու կանանց մոտ կլինեին:

Յոհաննան Մայիլյանի միակ մտավախությունն այսօր եղածը չկորցնելն է, իսկ նպատակը՝ բանակի հզորացումը: Լինելով հերոսի կին, նա ինքն էլ պատրաստվում է շարունակել հերոս ամուսնու գործը, գուցե ոչ գնեք ձեռքին, բայց ինքն էլ իր ասպարեզում:

«Իմ որդին հերոսի տղա է, ճիշտ է՝ փոքր է, բայց այնքան հասուն է, որ անգամ այս տարիքում ես չեմ կարող իր որոշումների վրա ազդել, եւ գուցե մեծանալով՝ նա ինքն էլ կորոշի հերոս հրեքներով քայլել, նրա գործը շարունակել: Ինչպէս որ իր հոր կողքին կանգնեցի, այս անգամ էլ նրա կողքին կկանգնեմ»,-ասում է Յ. Մայիլյանը:

Գերազանց եւ բարեխիղճ ծառայության համար Դավիթ Ղազարյանը բազմիցս արժանացել է մի շարք պատվոգրերի եւ շքանշանների՝ «ՀՀ ՁՈւ 20 տարի», «Ծովակալ Յ.Ս. Իսակով», «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի, «Վազգեն Սարգսյան», «Մարտական ծառայություն», «Երկրապահ կամավորական միություն» մեդալներով:

Արցախը Հայաստանի եւ մեր ազգի պաշտպանությունն է

Մայիսի 9-15-ը Արցախում էին ԱՄՆ Հայ դատի գրասենյակի Կառավարական գործերի ղեկավար Թերեզա Երեմյանը, IT տնօրեն Ներսես Սեմերջյանը եւ երիտասարդական ծրագրերի ղեկավար Ալեքս Մանուկյանը: Արցախ կատարած այցի մանրամասները, Հայ դատի աշխատանքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է Թերեզա Երեմյանի հետ:

- Ի՞նչ առաքելությամբ եք Արցախում:
- ԱՄՆ Հայ դատի գրասենյակի թիմի անդամներն Արցախ են այցելել, որպեսզի ուսումնասիրեն Արցախի ներկա վիճակը եւ պետական, հասարակական շրջանակների հետ խոսելով՝ հասկանան իրական վիճակը: Մեզ համար կարեւոր է հասկանալ, թե ինչպես կարող ենք նպաստել Արցախի անվտանգության ապահովմանը եւ նաեւ օգնել պատերազմի հետեւանքով տեղահանված քաղաքացիներին, առողջական խնդիրներ ունեցողներին:

- Ի՞նչ եք հասցրել իրագործել եւ ի՞նչ տպավորություններ եք ստացել հանդիպումներից:

- Անցած շաբաթվա ընթացքում շատ զբաղված էինք: Մեր հանդիպումներն սկսել ենք մարդու իրավունքների պաշտպանի հետ, տվյալներ ենք ստացել, թե ինչպիսին է վիճակը, ինչ ճնշումներ են արդրեջանական եւ թուրքական պետությունները գործադրում եւ դա ինչպես է ազդում մթնոլորտի վրա: Սահմանին շատ դեպքեր են արձանագրվում, որը խաթարում է առօրյա կյանքը: Նաեւ սոցալ նախարարի հետ ենք հանդիպել, տեղեկացել տեղահանված բնակիչների պայքարի պայմանների, ունեցած այլ դժվարությունների մասին: Այս ընթացքում նաեւ Համազգայինի Արցախի գրասենյակի կազմի հետ ենք հանդիպել, այցելել ենք Ստեփանակերտի ՀՕՄ-ի «Սոսե» մանկապարտեզ, Զեյնոյան Զոքսի անվան վերականգնողական կենտրոն եւ ակնատես եղել, թե որքան աշխատանք է տարվում, որպեսզի այստեղի մանուկներն ազատ ապրեն, հոգեբանական աջակցություն, նորմալ կրթություն ստանան Արցախում: Ուզում ենք, որ ապագա լինի այստեղ, ու փորձում ենք դա ամեն ձեւով ապահովել:

Դրսում սխալ տպավորություն կա, թե Արցախում գործունեություն չի ծավալվում: Չարմատեցել եմ, թե ինչպես շինարարություն է կատարվել այս մեկուկես տարվա ընթացքում: Ամբողջ քաղաքը ոնց որ առաջվանը լինի՝ նոր կառույցներով, բնակարաններով: Բնակչության նպատակն այստեղ մնալն է: Նրանք փորձում են իրենց ապրուստը հոգալ, ուզում են այստեղ ապահով ապրել:

- Պատերազմը ի՞նչ սրբագրումներ է արել Արցախի հետ կապված՝ Հայ դատի աշխատանքների առումով: Ի՞նչ ուղղությամբ եք հիմա աշխատում:

- Մեր աշխատանքը նույնն է մնացել՝ այն առումով, որ Արցախի անվտանգության համար պայքարել ենք նաեւ սրանից առաջ եւ հիմա այն շարունակում ենք: ԱՄՆ-ում գոյություն ունի բանաձեւ (Section 907 of the Freedom Support Act), որով արգելվում է նախկին Խորհրդային Միության երկրներին, այդ թվում՝ Ադրբեջանին, հատկացնել ռազմական ֆինանսական աջակցություն: 2001 թվականից նախագահ Բուշը թույլատրել է, որպեսզի ԱՄՆ-ն այդ աջակցությունը որպեսզի Ադրբեջանին: Սենատոր Մենենդեսը 2020թ. հուլիսի՝ Տավուշի դեպքերից հետո դիմեց ԱՄՆ Հանրապետությանը:

կան գրասենյակին (Government Accountability Office), որը պետական առանձին դեպարտամենտ է եւ հետեւում է օրենքի ճշգրիտ կատարմանը: Section 907 of the Freedom Support Act-ի պայմաններից մեկն այն է, որ ամեն տարի, նախքան նախագահի կողմից հաստատումը, պետք է համոզվեն, որ այդ ռազմական նյութերը չեն օգտագործվելու Արցախի ու Հայաստանի դեմ, եւ երկու երկրների սպառնազինության բալանսը չի խախտվելու:

Մենք տարիներով պայքարել ենք՝ շեշտելով, որ եթե 120 մլն դոլարը նախապես հարուստ երկրին է տալիս, դրանով հուշում է, որ ԱՄՆ-ն իրենց մեջքին կանգնած է, որովհետեւ պարզապես դրա կարիքը չունեն, եւ նաեւ Ադրբեջանին հնարավորություն է տալիս իր բյուջեն օգտագործել ռազմական նպատակով: Մեր աշխատանքի շնորհիվ, սենատոր Մենենդեսի օգնությամբ, երկու տարվա ընթացքում տվյալ բողոքարկումը կազմվեց: Շատ խախտումներ են արձանագրվել: ԱՄՆ պաշտպանության նախարարությունը չի հետեւել եւ չի ուսումնասիրել, թե ինչքանով է իրենց աջակցությունը խախտել բալանսը: Այդ խախտումներն ակնառու էին հատկապես պատերազմի ժամանակ: Մարտապրիլ ամիսներին տեղի է ունենում տվյալ ծրագրի հաստատումը: այս տարի նախագահը դեռ չի հաստատել: Վերջին երեք շաբաթվա ընթացքում խոսակցություններ են կայացել տարբեր հանձնաժողովների անդամների հետ, մասնավոր հրապարակումներ են եղել այդ մասին:

- Ինչքանով են պատերազմի արդյունքները, պարտությունը, ընկճվածությունը խոչընդոտում ձեր աշխատանքներին:
- Մենք միշտ հպարտ ենք մեր Արցախով եւ Արցախի բնակիչներով: Այդ առումով չենք տուժել, ավելի մեծ ուժով ենք փորձում աշխատել: Ազդել է այն առումով, որ եթե մենք առաջ պետությանն ասում էինք, որ Ադրբեջանի կազմում հնարավոր չէ ապրել, հիմա դա ավելի հստակ է դարձել: Ադրբեջանն այս վերջին պատերազմին ապացուցեց այն ամենը, ինչ մենք իրենց մասին ասում էինք: Ասում էինք, որ վտանգ են սպառնում հայությանը, որ երեխաներին փոքր տարիքից ատելություն են սովորեցնում: Իրենց անմարդկային վերաբերմունքը գերիների, հասարակ բնակչության նկատմամբ, անգամ մեկուկես տարի հետո Արցախի բնակչությանը հոսանքից, գազից զրկելը՝ հայերի նկատմամբ իրենց վերաբերմունքի ապացույց են:

Մենք սրանք ներկայացնում էինք՝ օրինակ բերելով Բաքուն, Սումգայիթը, Մարաղան: Անցած 20 տարվա ու այսօրվա ապացույցները նույնն են, ու ավելին՝ այսօր ավելի բարբարոս ձեւով են դրանք դրսևորվում: Այս փաստերն օգնում են, որ համոզվենք, որ Միացյալ Նահանգներն Ադրբեջանին որեւէ ռազմական օգնություն տալու կարիք չունի, եւ պետք է

ավելի հստակ լինի Արցախին օգնելը, ազատ, անկախ պետություն ունենալը, որտեղ հայերը կարող են ապրել եւ իշխել:

- Ինչպե՞ս եք պատկերացնում ԱՄՆ հայ համայնքի դերն այդպիսի ապագա կերտելու գործում:

- ԱՄՆ հայ համայնքի դեպքում՝ հստակ է, որ մեր հայրենակիցները պետք է իրենց քաղաքացիների, կոնգրեսականների հետ այն խոսակցությունը շարունակեն, որ Արցախը մեռած չէ, որ Արցախն ազատություն է ուզում, դրա համար արյուն է թափվել: ԱՄՆ-ն պետք է հասկանա, թե ինչ է թուրքը հայի համար, որ հնարավոր չէ հայը թուրքի տիրապետության տակ ապրի, եւ այդպիսի հնարավորություն չպարտադրեն Արցախին: Շատ կարեւոր



համապատասխան որոշում. շատ լավ լուր էր: Հիմա 50 նահանգները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, ԱՄՆ կառավարությունն ամենաբարձր մակարդակով ընդունել է, բայց մենք մեր պահանջները բարձրացրել ենք: Նախագահ Բայդենի հետ խոսակցությունը հետեւյալն է, որ բավարար չէ ճանաչելը, պետք է ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որպեսզի ամեն օր վտանգի տակ չլինի մեր գոյությունը:

Մենք մի շարք կոնգրեսականների հետ բանաձեւ ենք մշակել, որը կոչվում է «Հայոց ցեղասպանության ուսուցման մասին»: Այդ բանաձեւով նախատեսվում է 5 տարվա ընթացքում բյուջեից 10 մլն դոլար հատկացնել, որպեսզի Կոնգրեսի գրադարանից Հայոց ցեղասպանության մասին նյութեր բաժանվեն դպրոցներին, համալսարաններին եւ այն անձանց, որոնք ցանկանում են ուսումնասիրել Ցեղասպանությունը: Բանաձեւը նոր է մշակվում, գրեթե մի ամիս է, որ ներկայացրել ենք, եւ հուսով ենք, որ մինչեւ տարվա վերջ այն կընդունվի:

- Թուրքական եւ ադրբեջանական լոբբիի դեմ պայքարն ինչպե՞ս է ընթանում, եւ արդյո՞ք այդ առումով համագործակցում եք ՀՀ դեսպանության հետ:

- Թուրքական եւ ադրբեջանական լոբբիի հետ դժվար է, որովհետեւ շատ են: Նրանք ավելի շատ գումար ունեն, բայց մենք ավելի կազմակերպված, ավելի ակտիվ ենք: Բայց որպես ամերիկյան կառույց՝ իրավունք չունենք համագործակցել ՀՀ դեսպանի հետ, եւ միշտ այդպես է եղել: ԱՄՆ-ում ապրող հայերի հետ խորհրդակցում ենք, բայց մենք մեր ծրագիրն ունենք եւ դա ենք առաջ տանում:

- Ի՞նչ տեղ ունի Արցախը Հայ դատի պայքարի մեջ, եւ ի՞նչ հնարավորություն եք տեսնում Արցախի ճանաչման առումով:

- Արցախը Հայ դատի մեր ամենակարեւոր պայքարն է: Զանի որ Ցեղասպանությունը չի ընդունվել, արդարություն չի եղել Ցեղասպանության առումով, նոր վտանգներ են կախվել մեր երկրի գլխին: Սփյուռքում շատ է խոսվում, որ Արցախյան պատերազմը Ցեղասպանության շարունակությունն է: Երդողանը հայտարարություններ էր անում, որ իրենք իրենց պապերի գործն են ավարտին հասցնում, նաեւ տեսանք, թե ինչ ձեւով վերաբերվեցին ադրբեջանցի զինվորները մեր բնակչության նկատմամբ: 80 տարեկան կնոջ վիզը կտրելը, զինվորի գլուխը խոզի վրա դնելը, ամեն ձեւով վիրավորական վերաբերմունքը, վտանգ սպառնալը՝ մենք տեսնում ենք, որ չճանաչման հետեւանք է:

Արցախյան հարցը խճճված վիճակում է, եւ ակնհայտ է, թե ինչ պիտի լինի, եթե մենք Ադրբեջանի տիրապետության տակ լինենք: Արցախը Հայաստանի պաշտպանությունն է, մեր ազգի պաշտպանությունն է, դա է իրականությունը: Եթե Արցախը չլինի, Հայաստանը չի լինելու: Արցախն ամենաբարձր մակարդակի կարեւորություն ունի մեզ համար:

Արցախի ճանաչման ուղղությամբ շատ աշխատանք կա անելու: Մեր բարձրագույն նպատակն է, որ Արցախն ազատ, անկախ պետություն ճանաչվի, բայց դա նաեւ այստեղի մարդիկ պետք է ցանկանան: Անցյալում դա էր այստեղի ցանկությունը: Վերջիվերջո, արցախցին պիտի որոշի, թե ինչ է ուզում: Բայց որ մենք պայքարում ենք, որ ինքը անկախ պետություն լինի, դա միանշանակ է:

Չրուկեց Տ. ԱՐԱՉԱՆՅԱՆ

է, որ այս հասկացությունն ամեն անձ փոխանցի իր կառավարական մարմնին, եւ այդ ճնշումը նաեւ փոխանցվի ղեկավարության վրա: Ներկա պահին Ադրբեջանի լոբբին ամեն օր փորձում է շեշտել, թե իրենք խաղաղ կապրեն հայերի հետ, Արցախը իրենցն է, բայց հայերին կթույլատրեն խաղաղ ապրել Ադրբեջանի կազմում: Դա է իրենց նյութը եւ տարածում են, թե Արցախում ու Հայաստանում այդ առումով համաձայնություններ կան: Մենք որպես Հայ դատ, որպես անձնավորություն, որպես քվեարկող՝ պարտավոր ենք իրականությունը ցույց տալ: Այստեղ ապրող մարդը չի ուզում դա, դա չի լինի:

Մենք չենք կարող միակ ձայնը լինել այդ մարդկանց համար, բայց մենք եկանք լսելու այդ մարդկանց ձայնը: Հնարավորություն ունեցանք Halo Trust-ի աշխատակիցների հետ դաշտ գնալ, ռումբի պայթեցմանը ակնատես եղանք: Այս մարդիկ ամեն օր իրենց կյանքը վտանգելով ակնանագրեցին մեզ տարածքը, որովհետեւ չեն ուզում Ադրբեջանի կազմում լինել: Նրանք ուզում են, որ իրենց հողը խաղաղ լինի, ազատ լինի ամեն տեսակի վտանգներից: Հետ վերադառնալուց հետո թե՛ ԱՄՆ պետության հետ պետք է աշխատենք, թե՛ Սփյուռքի հետ: Արցախում ապրող մարդիկ որեւէ ձեւով չեն հրաժարվում իրենց հողից, եւ մենք պարտավոր ենք օգնել նրանց:

- Վերջերս ԱՄՆ Միասնիսպի նահանգը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Փաստորեն, ԱՄՆ բոլոր նահանգները ճանաչել են, դրանից հետո որո՞նք են լինելու ԱՄՆ Հայ դատի գրասենյակի աշխատանքի ուղղությունները:

- Այստեղ գալու ճանապարհին ստացանք լուրը, որ Միասնիսպին ընդունեց

Արցախը մեզ ուժ է տալիս. Ալեքս Մանուկյան

ՀՀ Կրթության պատանեկան միության հետ աշխատանքներ տանելու համար ապրիլի 9-15-ը Արցախում էին գտնվում ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի երիտասարդական միության անդամներ Ալեքս Մանուկյանն ու Շիրակ Օհանեսյանը:

Այցի ընթացքում հյուրերն այցելություններ եւ հանդիպումներ ունեցան Արցախի բոլոր շրջաններում գործող ՀՀ Կրթության պատանեկան միության խմբերի հետ:

Այցի ընթացքում երիտասարդները հնարավորություն ունեցան ծանոթանալ եւ շփվել պատանիների հետ, խոսել նրանց առօրյա կյանքի, պատանեկան միությունում հանդիպումների մասին, ներկա գտնվեցին պատանիների կազմակերպած միջոցառումներին, ինչպես նաեւ ներկայացրին իրենց շրջանում գործող պատանեկան միության գործունեությունը:

Հանդիպումներ ունենալով ՀՀ Կրթության պատանեկան միության Ասկերանի, Վանքի, Նորադյուղի, Մարտունու եւ Ստեփանակերտի խմբերի հետ, ՀՀ Կրթության երիտասարդական միության հետ համատեղ՝ երիտասարդները կազմակերպեցին պատանեկան ընդհանուր հավաք եւ մեկ ամբողջ օր առիթ ունեցան անցկացնելու պատանիների հետ:

ՀՀ Կրթության Կենտրոնական վարչության անդամ Անի Հովհաննիսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ դաշակցական պատանիները միշտ էլ ոգեւորվում են, երբ հանդիպումներ են ունենում սփյուռքահայ իրենց ավագ ընկերների հետ:

«Մեր պատանիներն իսկապես շատ ուրախ էին հյուրընկալել Վաշինգտոնից ժամանած մեր ընկերներին: Այցից հետո պայմանավորվածություն ձեռք բերվեց, որպեսզի օնլայն հարթակում կապ ստեղծենք մեր եւ ԱՄՆ Արևելյան շրջանի պատանիների միջեւ, որպեսզի իրենք ծանոթանան, ընկերանան եւ հետագայում համատեղ ծրագրեր կյանքի կոչեն»,- ասել է Ա. Հովհաննիսյանը:

Ա. Հովհաննիսյանի խոսքով՝ պատանիների հետ ունեցած մեկօրյա հավաքի օրակարգը շատ խիտ էր:

«Նախ՝ մեր տարբեր շրջանների պատանիների համար առիթ ստեղծվեց, որպեսզի իրար ճանաչեն եւ ընկերանան, բացի դրանից՝ մեր վարիչների հետ միասին պատրաստել էին նրանց համար հատուկ օրակարգ, որը լի էր ազգային պարերով ու երգերով, սպորտային ու ժամանցային խաղերով, որը, կարծում եմ, այս շրջանում շատ օգտակար էր պատանիների համար»,- նշել է Ա. Հովհաննիսյանը:

Ալեքս Մանուկյանն էլ մեզ հետ զրույցում նշեց, որ սա իր 2-րդ այցն է Արցախ պատերազմից հետո:

«Մեզ համար Արցախը հայրենիք է, մեր արցախցի հայրենակիցները մեր ամենալավ ընկերներից են: Սփյուռքահայությունն ունի Արցախի հանդեպ ջերմ մթնոլորտ, եւ ինչպես արդեն առիթ են ունեցել ասելու՝ սփյուռքահայությունն ապրում է Հայ դատի ոգով ու Արցախի շնչով: Մեզ համար Արցախը սրբավայր է, եւ մենք գիտակցում ենք, որ առանց Արցախի Հայաստան չկա: Ես եւ իմ ընկերը՝ Շիրակը, այսօր այստեղ ենք ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի երիտասարդական միության անունից, որպեսզի մեր հայրենակիցներին ցույց տանք, որ Սփյուռքը միշտ Արցախի կողքին է»,- նշել է Ա. Մանուկյանը:



Նա նշեց, որ թեւեւ Արցախում պատերազմ է եղել, սակայն իրենք վստահ էին Արցախի ժողովրդի կամքի ու ուժի վրա:

«Ես կասկած չունեի, որ երբ Արցախ գամ՝ մեր հայրենիքը կրկին գեղեցիկ ու խաղաղ կտեսնեմ: Մեր հայրենակիցներն Արցախում պետք է շարունակեն ապրել՝ չկորցնելով իրենց հավատն ու հույսը ապագայի նկատմամբ»,- ասել է Ա. Մանուկյանը:

Անդրադառնալով ՀՀ Կրթության պատանեկան միության խմբերի հետ հանդիպումներին՝ Ալեքս Մանուկյանն ընդգծեց, որ իրենք ականատես եղան այստեղի պատանիների ուրախ աչքերին, տեսան, թե ինչքան գորավոր են եւ անվախ:

«Երանի Սփյուռքի մեր բոլոր ընկերները կարողանալին ականատես լինել այդ ժպիտներին: Այդ ժպիտները ժպիտներ են, որոնց ետեւում ուժ, հույս եւ հավատ կա: Մենք շատ հուզված ենք, բայց եւ շատ ոգեւորված ենք Արցախի պատանիներով: Երբ վերադառնանք ԱՄՆ, մեր ուժերի ներածին կերպով պետք է նկարագրենք պատանիներին եւ, ընդհանրապես, Արցախի ժողովրդին»,- ասել է Ա. Մանուկյանը:

«Նախ՝ մենք ուզում էինք ասել, որ Արցախի կողքին ենք, հետո՝ երբ թրջամետ իշխանությունները փորձում են Սփյուռքում վերացնել հայրենասիրություն բառը, բայց մենք ցույց տվեցինք, որ այդպիսի բան լինել չի կարող: Ցանկացանք նաեւ Արցախում մեր դաշակցական ընտանիքին ավելի մոտիկից ծանոթանալ»,- ընդգծել է Ալեքս Մանուկյանը:

Նրա խոսքով՝ ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի երիտասարդական միության Կենտրոնական վարչությունը նպատակ ուներ, որպեսզի իրենք Արցախում լինեն մի քանի պատճառներով:

«Նախ՝ մենք ուզում էինք ասել, որ Արցախի կողքին ենք, հետո՝ երբ թրջամետ իշխանությունները փորձում են Սփյուռքում վերացնել հայրենասիրություն բառը, բայց մենք ցույց տվեցինք, որ այդպիսի բան լինել չի կարող: Ցանկացանք նաեւ Արցախում մեր դաշակցական ընտանիքին ավելի մոտիկից ծանոթանալ»,- ընդգծել է Ալեքս Մանուկյանը:



Լինելով Արցախում՝ Ալեքս Մանուկյանն ու Շիրակ Օհանեսյանը առիթ ունեցան մայիսի 12-ին ներկա գտնվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի Լեւոն Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպված «Ոչինչ չի մոռացվել» խորագրով միջոցառմանը, որի նախաձեռնությունը պատկանում էր Նույն դպրոցի սան, ՀՀ Կրթության պատանեկան միության Վանքի խմբի անդամ Անի Լազարյանին:

Միջոցառմանը, որը նվիրված էր 44-օրյա պատերազմում անմահացած համազյուղացիների հիշատակին, ներկա էին գոհվածների ծնողները, դպրոցականները, գյուղացիները, ՀՀ Կրթության երիտասարդական միության անդամները, ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի երիտասարդական միության անդամները, ՀՀ Կրթության պատանեկան միության Վանքի խմբի պատանիները:

Միջոցառման բացման խոսքը տրվեց դպրոցի տնօրեն Արամայիս Բալայանին:

«Հարգելի՛ որդեկրոյա ծնողներ, սիրելի՛ մանկավարժներ եւ հյուրեր:

Այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ հերթական անգամ կիսելու 44-օրյա պատերազմի ցավը: Այս պատերազմը լուր պատերազմ չէր կործանակից պաշտպանվելու համար, այլ թուրքիայի կողմից հերթական ցեղասպանությունն էր հայի արմատը իր դարավոր հողից վերացնելու համար:

Բոլորս գիտենք եւ քաջատեղյակ ենք՝ ինչպես սկսվեց պատերազմն ու ինչպիսի ավարտ ունեցավ: Ուրեմն, իմ ապագա սերունդ, մենք չպետք է ընկրկենք, պետք է պաշտպանենք մեր իրավունքը, պետք է հզորանանք, իսկ աշխարհն ինչքան էլ խուլ ու համր ձեւանա հայի արդար բողոքի հանդեպ, այնուամենայնիվ մենք պետք է կարողանանք կերտել մեր ճակատագիրը: Մենք պարտավոր ենք եւ իրավունք ունենք ապրելու մեր պապերի դարավոր հողում եւ պաշտպանելու մեր հայ քաջերի արյունով ներկված հողը:

Արցախի լինելը պատիվ է, Արցախում ապրելը՝ պայքար»,- ելույթի իր խոսքում ասել է Ա. Բալայանը:

Միջոցառման կազմակերպիչ Անի Լազարյանը ելույթի իր խոսքում նշեց. «2020թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան թշնամին հարձակման անցավ շփման գծի ողջ երկայնքով՝ 1994-ից ի վեր առաջին անգամ հրթիռակոծելով ԱԶ բոլոր խոշոր քաղաքները, նախ եւ առաջ՝ մայրաքաղաք Ստեփանակերտը: Պատերազմի 44-րդ օրը «հաղթելու ենք» հեշթեգով ապրող հանրությունը տեղեկացավ անասելի ցավոտ իրականության մասին... Ազատագրված եւ մոտ 3 տասնամյակ հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող 7 շրջանների հանձնում, ԼՂԻՄ-ի մաս կազմող Հադրութի եւ Շուշիի կորուստ, ռուս խաղաղապահների տեղակայում, ՀՀ տարածքով միջանցք կորստից եւ նրա կազմի մեջ մտնող Նախիջեւանի միջեւ, հազարավոր զոհեր ու վիրավորներ, տեղահանվածներ:

Արցախյան երկրորդ պատերազմն անսելի ցավոտ որոշմամբ պարտվեց 2020թ. նոյեմբերի 9-ին:

Հայրենիքի համար ընկան քաջեր: Ընկան, որ մենք չընկնենք:

Ազուն, ատեցի քեզ. ամբողջ սրտով ատեցի, որով հետեւ թույլ չտվեցի փայլող աչքերով հիանալ գեղեցկությունով, թույլ չտվեցի նկատել ոսկեգույն տերեւափող ու չթողեցի ձմռան ցուրտ օրերից առաջ վայելել հետզհետե մարող ջերմությունը: Այլ ստիպեցի արցունքով նայել տերեւափողի: Ստիպեցի թեւաթափ լինել, արցունք թափել հարյուրավոր հերոսների համար, որ իրենց կյանքը կիսատ թողնելով՝ ընկան հանուն հայրենիքի, ընկան, որ մենք չընկնենք:

Ծառերը ոսկեգույնով ներկեցի, բայց հողը արյունից կարմիր դարձավ, ներկվեց հերոսների արյամբ: Ընկան հանուն ուրիշ աշունների, որ պիտի լինեն իրենց մայրերի, քույրերի, սիրելիների ու իրենց թողած սերունդների կյանքում:

Ինչքան աշուններ պիտի տեսնեի նրանք, որ չտեսան, ինչքան գարուններ պիտի ապրեին, որ չապրեցին... Որոշները գուցե առաջին անգամ պիտի սիրահարվեին, բայց մահը նրանց ավելի շուտ սիրահարվեց ու հավերժ տարավ մեզանից...

Որոշները նոր պիտի պսակվեին, բայց հարսնացուների շորերը սպիտակի փոխարեն սեւ եղավ...

Շատերը նոր պիտի հայր դառնային, գևացին՝ չգրկած նորածին գավակին, թողեցին առանց հոր սիրո, մնացին միայն մարդկանց սրտերի ու հիշողությունների մեջ: Ու հենց նրանց համար մենք պիտի շարունակենք ապրել. չէ՛ որ պարտավոր ենք, որովհետեւ ապրելու ենք նաեւ նրանց փոխարեն:

Հիմա պարտավոր ենք ոչ միայն ուղղակի ապրել, այլ ապրել արժանապատվորեն, որ գոնե մի քիչ արժանի լինենք նրանց, ում համար այսօր այստեղ ենք, եւ փաստում ենք, որ առճակատվել մահվան հետ հանուն հայրենիքի՝ ունակ են միայն մեր հերոսները»:

Միջոցառման ընթացքում պատանիները հանդես եկան ամուսնով, ազգային-հայրենասիրական երգերով, բեմականացումներով:

Ավարտին ելույթով հանդես եկան նաեւ ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի երիտասարդական միության անդամներ Ալեքս Մանուկյանն ու Շիրակ Օհանեսյանը:

Ալեքս Մանուկյանը, ողջունելով ներկաներին, շնորհակալություն հայտնեց հուզիչ, բայց եւ գոտեպնդող միջոցառում կազմակերպելու համար:

«Մենք շատ ուրախ ենք, որ այս օրերին հայրենիքում ենք՝ ձեզ հետ, եւ կարող եմ ասել, որ սփյուռքահայերի համար ամենաքաջալույսի կերպը՝ Արցախում, մեր հողի վրա, մեր հայրենակիցների հետ լինելն է: Դժբախտաբար, Սփյուռքում ենք ծնվել՝ հայրենիքից հեռու, սակայն ուզում եմ վստահեցնել, որ յուրաքանչյուր սփյուռքահայ ապրում է Հայ դատի ոգով եւ Արցախի շնչով:

Արցախը եւ արցախցիները մեզ ամեն օր հույս, հավատ եւ ուժ են տալիս: Դո՛ւք եք դիմադրությունը, դո՛ւք եք, որ ամեն օր դիմադրում եք թշնամուն: Մենք փորձում ենք Սփյուռքից անել առավելագույնը, սակայն ինչ էլ որ անենք, ձեր դիմադրության կողքին՝ ոչ մի բան է: Մենք, լինելով ՀՀ Կրթության երիտասարդական միության անդամներ, ամեն ինչ անում ենք հայրենիքի համար, եւ միշտ պատրաստ ենք ձեր կողքին լինել:

Ուզում եմ նաեւ շնորհակալություն հայտնել մեր հերոսածին մայրերին. դուք մեր փառքն ու պարծանքն եք, մեր հայ ազգի ողնաշարն եք: Խոնարհվում ենք մեր հերոսների եւ նրանց մայրերի առջեւ»,- ասել է Ա. Մանուկյանը:



«Ուզում եմ շնչտել, որ սփյուռքահայերիս համար Արցախում ապրելն առաջնահերթություն է: Սփյուռքահայությունը երբեք թույլ չի տա, որ տարբեր ուժեր մեզ բաժանեն սփյուռքահայերի, հայաստանցիների, արցախցիների. մենք տեր ենք, մենք միասնական ենք, միշտ միասին ենք, միշտ ձեր կողքին ենք եւ կմնանք: Ո՛չ ներքին, ո՛չ էլ արտաքին թշնամին չի կարող քայքայել հայրենիքը: Հուսով ենք, որ շուտով կվերադառնանք մեր հողերը:

Հատուկ շնորհակալություն նաեւ ՀՀ Կրթության պատանեկան միության Վանքի խմբի անդամ, ընկերուհի Անի Լազարյանին նման միջոցառում կազմակերպելու համար»,- ասել է Շ. Օհանեսյանը:

Շարունակելու ենք աշխատել հայրենիքի շենացման համար

Արցախյան պատերազմի առաջին օրերից մինչև այսօր ԶՕՄ-ը պետության եւ ժողովրդի կողքին է եղել եւ արել է առավելագույնը թե պետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին սատարելու եւ թե առանձին սոցիալական խմբերի կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ: 30 տարիների ընթացքում ԶՕՄ-ի ծրագրերը լուրջ փոփոխության չեն ենթարկվել, նրանց ավելացել են նաեւ նոր ծրագրեր՝ ստեղծված ժամանակի թելադրանքով: Այս մասին «Ապառաժ»-ի հետ գրույցում կշռել է Հայ օգնության միության Արցախի միավորի ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանը: Ամբողջական հարցազրույցը՝ ստորեւ:

- Ինչպե՞ս է պատերազմական եւ հետպատերազմական վիճակն ազդում Արցախում Հայ օգնության միության գործունեության ուղղությունների վրա:

- Հայ օգնության միությունը, որպես հարյուրամյա փորձ ունեցող կազմակերպություն, հավատարիմ իր կարգախոսին, միշտ կանգնած է հայ ժողովրդի կողքին: 2020 թ. սեպտեմբերի 27-ից՝ պատերազմի հետք առաջին իսկ օրից ԶՕՄ-ի աշխարհասփյուռ կառույցն իր ողջ ներուժն ուղղեց դեպի Հայաստան եւ Արցախ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով ստեղծված դժվարին ու ողբերգական իրավիճակում կյանք ապահովելու ու բարոյապես սատար կանգնելու մեր հայրենակիցներին:

44-օրյա պատերազմի եւ դրան հաջորդած օրերին մշակվեցին եւ կյանքի կոչվեցին անմիջական օժանդակության տարբեր ծրագրեր՝ առաջնահերթություն տալով զոհված եւ վիրավոր զինծառայողների ընտանիքներին, տեղահանված բնակիչներին:

- Վերջին շրջանում ի՞նչ ծրագրեր է իրագործել ԶՕՄ-ի Արցախի միավորը եւ առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունի:

- ԶՕՄ-ի Արցախի միավորը ԿՎ-ի կողմից ստացված շրջաբերականների վրա հիմնվելով՝ շարունակում է իր որդեգրած առաքելությունը եւ ընթացիկ օժանդակության ծրագրերը:

ԶՕՄ-ի Կանադայի շրջանային վարչության հովանավորությամբ Արցախի՝ թշնամու կշանառության տակ հայտնված 21 գյուղերում իրականացրել ենք «Ամանոր» ծրագիրը: Կանադայի ԸՎ ապետապետուհի Անի Օհանյանը եւ Սյուզի Պոլյանյանն անձամբ են ներկա գտնվել, ամանորյա նվերներ հանձնել շուրջ 1400 նախադպրոցական խմբերի երեխաների եւ աշակերտների, 581 ընտանիքի տրամադրել են գումար:

Ամանոր ծրագրի շրջանակներում նվերներ են ստացել

ԶՕՄ-ի 4 «Սոսե» մանկապարտեզների սաները:

ԶՕՄ-ի ուշադրության կենտրոնում են նաեւ Արցախի ՊԲ-ի զինվորները:

ՀՀԴ ԱԵՄ-ի հետ համագործակցությամբ 150-ական գլխարկ, ձեռնոց, գուլպա եւ քաղցրավենիք ենք հատկացրել ՊԲ N գորամասի զինվորներին:

Վերջին սահմանային լարվածության հետ կապված՝ ԶՕՄ-ի Արցախի միավորի կողմից քննադատներ, անջրանցիկներ, գլխարկներ, ձեռնոցներ, գուլպաներ, ինչպես նաեւ քաղցրավենիք ենք հանձնել դիրքապահներին, բանակային ստորաբաժանումներին ու կամավորական խմբերին:



- Հայ օգնության միությունն Արցախում գործում է Արցախյան առաջին պատերազմի օրերից: Տարիների ընթացքում ի՞նչ փոփոխություններ են կրել բարեգործական այդ կազմակերպության առաջնահերթությունները:

- ԶՕՄ-ը նպաստել է կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական, տնտեսական ոլորտներում մի շարք ծրագրերի իրականացմանը: Կրթության ոլորտում Արցախում ներդրած ԶՕՄ-ի ամենամեծ ծրագրերից է «Սոսե» մանկապարտեզների ծրագիրը: Մինչ պատերազմը Արցախում գործում էր 8 «Սոսե» մանկապարտեզ: Պատերազմի հետեւանքով Շուշիի, Տոզի, Մեծ Թաղերի եւ Զարեգահի մանկապարտեզները մնացին թշնամու կողմից օկուպացված տարածքներում: Ներկայումս շարունակում են գործել Ստեփանակերտի, Խնձրիստանի, Աշանի եւ Ականաբերդի մանկապարտեզները: Արցախում ստեղծված հումանիտար աղետի՝ անջատված գազա-

տարի եւ տեղացած առատ ձյան պատճառով, ինչպես մյուս ուսումնական հաստատությունները, այնպես էլ «Սոսե» մանկապարտեզները մարտ ամսին փակվեցին, այժմ աշխատում են բնականոն ռեժիմով:

Կրթական ծրագրերից է «Ավագույն ուսանող» ծրագիրը: Այս ուսումնական տարում ծրագրում ընդգրկվել են 44-օրյա պատերազմի մասնակցած՝ արցախյան բուհերում սովորող 105 ուսանող:

Արցախում գործադրված առաջին ծրագրերից էր նաեւ պատերազմում «Որբախնամ» ծրագիրը, որն արդեն ավարտին էր հասնում, սակայն վերագործադրվեց արցախյան երրորդ պատերազմից հետո եւ վերանվանվեց «Չոհված հերոսների զավակներ» ծրագիր: 44-օրյա պատերազմից հետո ԶՕՄ-ի Հայաստանի շրջանային վարչության եւ Արցախի մեկուսի մասնաճյուղում հավաքագրվել է ԿՎ-ն են հանձնվել զոհված հերոսների 1800 անչափահաս զավակների տվյալներ, որոնցից 620-ը՝ Արցախում: Ծրագրի մեկնարկը շուտով կտրվի: ԶՕՄ-ի Կենտրոնական վարչությունը յուրաքանչյուր երեխայի տարեկան խնամքի գումար է սահմանել 300 դոլար՝ նախկին 170-ի փոխարեն:

Ուշադրության կենտրոնում է նաեւ տեղահանված բնակիչների կենցաղային պայմանների բարելավմանը միտված ծրագրերը:

«Թեւանիկ» բարեփոխական խմբի օժանդակությամբ ձեռք ենք բերել մահճակալներ եւ պահարաններ, որոնք Արցախի բնակարանային կոմիտեի հետ համագործակցությամբ կտրամադրվեն նոր բնակարաններ ստացած մեր հայրենակիցներին: Ծրագրի մեկնարկն արդեն տրված է:

ԶՕՄ-ի Արցախի միավորը նաեւ տարբեր ձեռնարկներ է կյանքի կոչել՝ կանանց զբաղվածության խնդրին սատարելու նպատակով: Նախքան պատերազմը «Թեւանիկ» բարեփոխական խմբի հետ կազմակերպվել են ձեռքի աշխատանքների ու կարուճեւի դասընթացներ, որի նպատակը արհեստի այս ճյուղում արցախցի կանանց հմտանալն ու սեփական եկամտի աղբյուր ապահովելն էր:

Կազմակերպվել են նաեւ մատնահարդարման դասընթացներ տեղահանված ու զոհված զինծառայողների կանանց համար: Ծրագիրը կկրի շարունակական բնույթ եւ կօգնի տեղահանված ընտանիքներին եկամտի աղբյուր գտնել:

Առաջիկա ծրագրերն ու անելիքները նույնպես շատ են: Շարունակելու ենք մեր աշխատանքով՝ նպաստել հայրենիքի շենացմանը:

Հարցազրույցը՝ Տ. ԱՐԱՋԱՆՅԱՆԻ

Բոլորը գնում են, բացի պատերազմից

«Պատերազմ... աչքեր... ծաղիկներ...», «Վազում եմ, սպասիր...», «Օրացույցից պոկված օրեր»... սրանք արցախցի գրող Չերմինե Ավագյանի գրքերն են, որոնցից վերջինը նոր է լույս տեսել: Պատերազմ, ապրումներ, հաղթանակի հույս. գրքում շոշափվող այս թեմաների շուրջ է «Ապառաժ»-ի հարցազրույցը գրողի հետ:

- «Օրացույցից պոկված օրեր»-ը Ձեր երրորդ գիրքն է, ու կրկին առանցքում պատերազմն է, Ձեր մտորումներն ու ապրումները պատերազմի օրերին եւ դրանից հետո: Մենք դատապարտված ենք ապրել պատերազմի կողքին ու պատերազմի մեջ:

- Առաջին գիրքս ամբողջությամբ պատերազմի մասին էր, երկրորդում փորձեցի խոսել ապրելու մասին, բայց հիմա, երբ թերթում եմ այն, հասկանում եմ, որ պատերազմն այդ գրքում եւս թողել է իր որոշակի հետագիծը: Երրորդ գիրքս առանձնանում է նրանով, որ առաջին անգամ արձակի կողքին հանդես եմ գալիս պոեզիայով: Մտածում էի, որ այս երրորդը շրջանցելու է պատերազմի թեման, բայց վերջին պատերազմը ծնունդ տվեց իմ պատերազմական օրագրին եւ խմբագրին խորհրդով պոեզիայի կողքին գրքի մեջ զետեղեցի նաեւ «Կարմիր տառերով օրագիրը»:

Ես մի երագանք ունեմ, որ պատերազմը հետայսու մնա օրագրերում, գրքերում, որ էլ ստիպված չլինենք նրան անդրադառնալ, բայց երբ երկիրդ պատերազմի մեջ է, գրողը չի կարող չզգալ ու չգրել նրա

ցավի մասին: Այս ամենի կողքին, սակայն, մի կարեւոր բան կա՝ պատերազմը նաեւ սովորեցնում է սիրել, դա նրա ամենալավ դասն է, սակայն բոլոր պատերազմներից հետո մենք մոռանում ենք սերտել այդ դասը, ու դրա համար նաև նորից ու նորից գալիս է...



- Գրում եք, որ մարդիկ ամենաշատը փախչում են պատերազմից, բայց ամենաշատը պատերազմն է գալիս նրանց հետեւից: Ի՞նչ պարտքեր ունի պատերազմը նրանցից:

- Այս հարցը Ձեր նախորդ հարցի շարունակությունը կհամարեմ: Ինչպես գրքում է ասվում՝ բոլորը գնում են, բացի պատերազմից...

Երբ պատերազմը մի օր մտածելու, խորհելու կանգառ դառնա, երբ մարդու եւ մարդու միջեւ սերը դառնա թելադրող, այդ ժամանակ պատերազմն իր «պարտքերի» հետեւից անընդհատ չի վերադառնա: Սերը երկար ճանապարհ է, որի ամեն քայլափոխը պայքար է լավի համար: Եթե չես



հասնում ճանապարհիդ ցանկալի հանգրվանին, ուրեմն մինչեւ վերջ չես սիրել, ուրեմն շեղել ես ճամփադ, ուրեմն հարթ ու դյուրին ուղիներ ես փնտրել ու մոռացել ես, որ ունեցածդ փայփայել է պետք ամեն օր, ունեցածիդ համար պայքարել է պետք ամեն օր:

Մենք մեր սերը թողել ենք ճանապարհի կեսին ու չենք նկատել դա, դրա համար

հիմա հանգրվան ենք փնտրում ու չենք գտնում...

- 44-օրյա պատերազմի առաջին օրերին վերհիշել եք դեռեւս առաջին պատերազմում անմահացած Ձեր հոր խոստումը՝ բերել հաղթանակ: Հիմա է՞լ եք սպասում այդ ավետիսին:

- Ես հիմա նայում եմ այն երեխաների աչքերին, որոնց հայրերը տուն չգարձան եւ նրանցում գտնում եմ իմ աչքերը: Իմ ու նրանց աչքերը նման են այնքանով, որ նույն հարցն են տալիս՝ ո՞ր է մեր հաղթանակը:

- Կիսատ գրույցներս դրել եմ ծրարի մեջ, նամակներս մնացել են ճամփին՝ գրել եք Արտակ Իշխանյանի ու մյուս նահատակ ընկերների մասին: Ի՞նչ եք ցանկանում նրանց ասել:

- Եթե երկինքը հասցնեք ունենար, ես կգրեի՝ ներեցե՛ք մեզ, տղերք... Երկնքից ավելի լավ են երեւում մեղավորները...

- Ե՞րբ եք նախատեսում գրքի շնորհանդեսը, ինչպե՞ս եք ներկայացնելու ընթերցողներին:

- Երբեք ինքս չեմ նախաձեռնել իմ գրքերի շնորհանդեսները, միշտ ընկերներս են կազմակերպել, նաեւ՝ Գրողների միությունը: Եթե անկեղծ՝ շնորհանդես ու նման ինչ-որ ճոխ բառեր չեմ ուզում, կուզեի նոր գիրքս այլ ձեռագրով ներկայացվել ընթերցողին:

Չորուցեք Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆԸ

Ե՛կ, աշխարհը պիրիսք Արցախ. Ափո Սահակյանն Արցախում

Մայիսի 8-ին Ստեփանակերտի Պոլ Էլյուարի Ֆրանկոֆոնիայի կենտրոնում կայացել է երգիչ, երգահան ու գրող Ափո Սահակյանի ակուստիկ ելույթը: Մինչ այդ, մայիսի 7-ին երգիչը ելույթ էր ունեցել նաև Մարտունի քաղաքի բնակիչների համար:

Համերգները Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի «Ե՛կ, աշխարհը պիրիսք Արցախ» նախաձեռնության շրջագծում են՝ Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի հետ համագործակցաբար:

Համերգի բացման խոսքով հանդես են եկել Համազգայինի Արցախի գրասենյակի տնօրեն Յերմինե Ավագյանը եւ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի հանրային կապերի համակարգող Ռուբեն Ճանսպայանը:



«Ծրագրի եռությունն այն է, որ փորձում ենք ստեղծել մշակութային, գրական, կրթական, գիտական կամուրջ Արցախի ու աշխարհի, Արցախի ու Սփյուռքի, Արցախի ու մայր Հայաստանի, Արցախի ու առհասարակ հայ մտավորականի, հայ արվեստագետի միջեւ՝ անկախ բնակության վայրից: Այդ կամուրջը բանուկ է մնում հենց այսպիսի միջոցառումներով: Այս նախաձեռնությունն ապրելու ղողանջ է, որ ուզում ենք հնչեցնել աշխարհին, որ այստեղ՝ այս մի բուռ Արցախում, շարունակում է ապրել, արարել հայ մարդը»,- իր խոսքում նշել է Յերմինե Ավագյանը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր աջակիցներին:

Ռուբեն Ճանսպայանը պատահական չի համարում ծրագրի խորագիրը՝ «Ե՛կ, աշխարհը պիրիսք Արցախ»: «Մենք ուզում ենք ցույց տալ այստեղի հերոսական ժողովրդին, որ համայն հայությունն Արցախի կողքին է, Արցախի հետ է»,- նշել է նա:

Համերգի վերջում, Ափո Սահակյանի հայրենասիրական երգերից ոգեւորված ներկաները, կատարել են «Չարթնի՛ր, լաո՛» երգը:

Ստեփանակերտյան համերգը կայացել է անմիջական մթնոլորտում, մասնակիցները ձայնակցել են երգերին ու շուրջպար կազմել: Համերգին ներկա էր նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը:

Նախաձեռնությանն իրենց աջակցությունն են ցուցաբերել «ԶԶ» տաքսի ծառայությունը եւ «Կինի Ստեփանակերտ» սրճարանը:

Ես գրիչն եմ բռնել. դա էլ գենքի տեսակ է

Մեծ ուրախությամբ համաձայնեցի մասնակցել այս նախագծին: Երեւանից դուրս՝ որտեղ էլ համերգի համար առաջարկեն, ես առանց երկմտելու կհամաձայնեմ, առավել եւս՝ Արցախ: Այս մասին «Ապառաժ»-ին պատմում է երգիչ, երգահան, Երուսաղե-

մում գործող «Apo and The Apostles» ռոք-խմբի հիմնադիր Ափո Սահակյանը: Մայիսի 7-ին եւ 8-ին Արցախի Մարտունի եւ Ստեփանակերտ քաղաքներում ելույթներ ունեցած երգիչը զարմանքով է արձանագրում, որ տղամարդիկ համերգների քիչ են մասնակցում: Սակայն ուրախությամբ նշում է, որ պատանիներն էին շատ, հատկապես՝ Մարտունիում: «Հուսով եմ, որ այս երեխաները մեծանալուց հետո կսկսեն համերգների գնալ: Մշակույթը շատ կարելի է խաղում անձի հասունացման, կայացման գործում»,- նշում է նա:

Չնայած շատ անգամ է եղել Արցախում, նաև 44-օրյա պատերազմի ընթացքում, սակայն Արցախում մինչ այս համերգ չէր ունեցել: «2009թ. Շուշիում մի աղջկա համար երգեցի: Սիրահարված էի, հյուրանոցում կիթառ կար, ու մոտ մեկ ժամ երգեցի միայն նրա համար»,- ժպտալով հիշում է երգիչը:

Երգչի երգացանկում կան ինչպես ժողովրդական, հայրենասիրական երգեր, այնպես էլ Մուսա լեռան, Համշենի բարբառով ստեղծագործություններ: Արցախյան վերջին պատերազմից հետո դրանց ավելացել է Հաղորթի բարբառով «Կյասս, քիսս» երգը (երգում է Արթուր Խաչենցի հետ), Անի Խառատյանի հետ միասին ներկայացրել են «Զարին տակ» երգը, որի խոսքերի եւ երաժշտության հեղինակը մեր զրուցակիցն է:

Խոսելով պատմական հայրենիքի կողքին նոր կորսված տարածքներին ստեղծագործություններ նվիրելու, մշտապես տուժածի կարգավիճակում լինելու մասին՝ Ափո Սահակյանը նշում է, որ 100 տարի, միգրացի ավելի երկար ժամանակ է՝ շրջապատույթի մեջ ենք: «Բայց ես հիասթափված չեմ: Իմ գաղափարախոսության հիմնադիրները՝ Զրիստափորը, Ռոստոմը, Չավարյանը, Արամը, Նժդեհը, Սոսեն ու Սերոբն են: Երբ լեռը հաղթահարում ես, չի նշանակում, թե պայքարը վերջացել է: Եթե մենք վաղը չէ մյուս օրը էլի Շուշին, Վանը վերցնենք, ծովից ծով Հայաստանը վերականգնենք, դա չի նշանակում, թե պայքարն ավարտվելու է: Դա նշանակում է, որ նոր պայքարի փուլեր են լինելու (ենթադրենք՝ բնապահպանություն կամ արդյունաբերության ինչ-որ ճյուղ): Պայքարը երբեք չի ավարտվում»,- համոզված է դաշնակցական արվեստագետը:

Եթե քեզ խփեն ու գետնին ընկնես, դա չի նշանակում, թե գետնին պիտի մնաս: Չպիտի ասես՝ ինձնից ուժեղ են, դու պիտի ձեւեր գտնես եւ շրջապատույթից դուրս գաս: Ես հիմա զինվոր չեմ, գենք բռնել չգիտեմ, ես մշակույթի ներկայացուցիչ եմ, ես իմ բաժինն եմ անում: Եթե վաղը չէ մյուս օրը Շուշին հետ վերցնենք, հավերժ կվերցնենք, որովհետեւ մեր սկզբունքներն ու հիմքերը ավելի ճիշտ կլինեն, ու այդ շրջապատույթից դուրս

կգանք»,- ասում է նա:

Իսկ ի՞նչ պիտի անի Արցախում եւ Սփյուռքում ապրող մարդը այդ շրջապատույթից դուրս գալն արագացնելու համար:

«Ամեն մարդ իր գործը պիտի անի: Բոլորս պիտի աշխատենք ու նախաձեռնենք: Դու նախ եւ առաջ պիտի նախաձեռնես, չսպասես՝ քեզ ասեն ինչ անես: Պետք է անկախ լինես քո քայլերի, նախաձեռնությունների մեջ, քո ճակատագիրը պիտի կառուցես առանց որեւէ մեկից կախվածության: Եթե ամեն հայ լինի Արցախում, Հայաստանում, Սփյուռքում, ամեն մեկն իր գործն իբր անհատ, բայց հավաքական շահի համար անի, արդյունքները կտեսնենք: Ես չեմ ակնկալում, որ այսօր կամ վաղը կտեսնեմ սա: Ես շատ համբերատար եմ: 2000 տարի էլ կարող ենք համբերել: Մենք երգ ունենք «Համբերե, հոգիս, համբերե»,- նշում է Ափոն:

Նա Արցախում եղել է Նոյեմբերի 14-ին: Խոսելով իր նկատած փոփոխությունների մասին՝ հույս է հայտնում, որ արդեն միամիտ չենք, որ հավատանք, թե աշխարհը կգա ու կփրկի մեզ: «Մենք մեզ պետք է փրկենք՝ նախ եւ առաջ: Ինչո՞ւ պիտի ոչ հայը գա ու փրկի քեզ. նա իր շահն ունի, դու քո շահը, նախաձեռնիր քո ճանապարհը: Բայց համբերությամբ նախաձեռնիր, կարելի է, թե երբ հնարավորություն կլինի այն իրագործելու: Չգում եմ, որ մարդիկ ավելի զգոն են, ավելի արթուն են, ավելի քիչ միամիտ են: Հիմա պետք է ավելի շատ խորամանկ լինենք: Ի վերջո, դեռ Արցախը կա, մարդիկ դեռ ապրում են Ստեփանակերտում, հնարավոր է՝ վախով, անորոշությամբ, բայց ապրում են»,- ասում է երգիչը՝ կարեւորելով մարդկանց վճռականությունն հաղորդելը, վրեժի գաղափարն արթուն պահելը:

Ինչո՞վ է տեսնում երգիչը Հայաստանի փրկությունը՝ երգով, թե՞ գենքով:

«Ես դաշնակցական եմ, եւ գիտեմ, որ միայն գենքով կա հայոց փրկություն: Բայց չմոռանանք, որ Դաշնակցության զինանշանի մեջ երեք խորհրդանիշներ կան՝ գրիչը, բաիը եւ սուրը: Ես գրիչն եմ բռնել, ու դա էլ գենքի տեսակ է: Վերջերս «Forbes»-ում



մի հոդված է հրապարակվել իմ նոր լրբումի մասին: Ալբոմում տարբեր բարբառներով ստեղծագործություններ կան, այդ թվում՝ Արցախի Հաղորթի բարբառով: Հոդվածում «Forbes»-ն առաջին անգամ մեր պատմությունը ներկայացրեց, նշվեց, որ Աղրբեջանը էթնիկ գտում է արել: Դա էլ իմ գենքն է միջազգային ասպարեզում, դա էլ պայքարի ձեւ է»,- համոզված է երգիչը:

Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ